



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

А. М. МКРТЧЯН

КАРИНСКИЙ ДИАЛЕКТ

(ФОНЕТИКА, МОРФОЛОГИЯ, СЛОВАРЬ)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1952

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԴԵՍՏԻՏՈՒՏ

Հ. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԸ

(ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՐԱՆ)

**Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ**

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Ստալինյան լեզվաբանական ուսմունքը լեզվաբանության կենտրոնական հարցերից մեկը դարձրեց բարբառների ուսումնասիրությունը:

Ընկեր Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ աշխատության մեջ ցույց տվեց, որ տեղական («տերթառորիխալ») բարբառներն արմատապես տարբերվելով «դասակարգային» բարբառներից, ժարգոններից, իրենց հնությամբ հասնում են մինչև ցեղային կյանքի ժամանակաշրջանները, սպասարկում են ժողովրդական լայն մասսաներին, ունեն լեզվի սպեցիֆիկայի էությունը կազմող իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը և վճռական դեր՝ ազգային լեզուների կազմավորման պրոցեսում:

Ստալինյան այս ցուցումները բարձրացնում են բարբառագիտության՝ լեզվաբանության այդ մասնաճյուղի նշանակությունը, որովհետեւ, ինչպես հայտնի է, տեղական բարբառները հանդիսանում են հենց բարբառագիտության ուսումնասիրման հիմնական առարկան: Այդ ցուցումները հանդիսանում են մի ուղեցույց առանձին լեզուների, այդ թվում նաև հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, պատմական քերականության հարցերը ճիշտ կերպով լուծելու համար:

Բովանդակ հայոց լեզուն՝ իր հին ու նոր գրական լեզուներով և շուրջ չորս տասնյակ տեղական բարբառներով, ներկայացնում է լեզվական իրողությունների մի անսպառ շտեմարան: Այդ իրողությունների ճիշտ, գիտական լուսաբանությունը հնարավորություն է տալիս պարզել հայ էթնոսի կազմավորման պրոցեսի բարդ հարցերը, այլև հսկայական նյութ է մատակարարում մարքսիստական լեզվաբանական ուսմունքի առանձին դրույթները կոնկրետ կիրառելով և զարգացնելու գործում:

Հնում՝ հայոց լեզու ասելով սխալ կերպով հասկացել են միայն գրաբարը, և հին հայգիտությունը անհամեմատ ավելի

մանրամասն է ուսումնասիրել հայոց այդ հին գրական լեզուն։ Հայոց լեզվի ուսումնասիրությունը, սակայն, առանց բարբառների ուսումնասիրության կլինի թերի և անկատար։

Տարակույս չկա, որ բարբառները հանդիսանալով հասարակության ընդհանուր, միասնական լեզվի ճյուղավորումները, տերիտորիալ տեսակետից լինելով նեղ, սահմանափակ միջավայրի հազորդակցման միջոց, պատմական այն ժամանակաշրջանում, երբ առկա է ազգային լեզուն, չունեն և չեն կարող ունենալ գործնական մեծ նշանակություն։ Ավելին. իրենց գոյությամբ նրանք խոչընդոտում են ազգային միասնական լեզվի զարգացումը, գանդաղեցնում վերջինիս համազգային լեզու գառնալու գործը, թեև միաժամանակ հանդիսանում են ազգային լեզվի բառապաշարի հարստացման, ճիշտ է երկրորդական, այնուամենայնիվ ազբյուրներից մենք։¹

Ահա այս պատճառով բարբառների ուսումնասիրությունը այժմ ունի գիտական և պատմական նշանակություն։

Հայոց լեզվի բարբառների լեզվական իրողությունները մեծ արժեք են ներկայացնում հայերենագիտության և ընդհանուր լեզվաբանության համար, նրանց ուսումնասիրությունը հնարավորություն կտա ոչ միայն ամբողջացնել հայոց լեզվի պատմությունը, այլև պարզել մեր լեզվի գենեզիսի շատ հարցեր։

Ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ պարզ են գառնում բարբառների ոչ միայն առաջացումն ու զարգացումը, նրանց գերն ու նշանակությունը հաստըակության զարգացման տարրեր ժամանակաշրջաններում՝ կապված այդ հասարակության պատմության հետ, այլև նրանց անհետացման ձանապարհներն ու պատճառները՝ կապված դարձյալ հասարակության պատմության հետ։ Ընկեր Ստալինը ցույց տալով, որ տեղական բարբառները կարող են հիմք գառնալ ազգային լեզվի համար, ավելացնում է. «Ինչ վերաբերում է այդպիսի լեզուների մնացած բարբառներին, ապա նրանք կորցնում են իրենց ինքնօրինակությունը, ձուլվում են այդ լեզուների հետ և անհետանում դրանց մեջ»²։

Բարբառների անհետացման այս ընդհանուր ճանապարհով են ընթանում նաև հայ բարբառները։ Աստիճանաբար կորցնելով

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմ և լեզվաբանության հարցերը», Երեւան, 1951 թ., էջ 102—103։

իրենց ինքնօրինակությունը, նրանք ձուլվում և անհետանում են՝ ժամանակակից հայերենի մեջ, որը, շնորհիվ սովետական կարգերի, ձեռք է բերել մեծ ժողովրդայնություն և հանդիսանում է հայ հասարակության ազգային ընդհանուր, միասնական լեռ զուն. Արգեն պատմության գիրքն են անցել Թբիլիսիի, Մեղրու, Ագուլիսի և այլ բարբառները, նույն ճանապարհն են բռնել նաև մյուս հայ բարբառները, այդ թվում նաև Կարնո բարբառը, Կարնո բարբառը հայոց լեզվի «կը» ճյուղի ամենամեծ և գեռես կենդանի բարբառներից մեկն է. Նրա կենտրոնը եղել Կարինը, տարածվել է մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշիանեա¹, հանդիսացել է Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտրչուրի, Բարերդի, Մպերի խոսակցական լեզուն²: Խուս-թյուրքական պատերազմների (հատկապես 1828 թ.) ժամանակ հայերի տեղափոխման հետեւնքով բարբառի սահմանները տարածվել են մինչև Ախալքալաքի, Թբիլիսի:

Սովետական Հայաստանում բարբառս հանդիսանում է ուսուպութիկայի արդյունաբերական երկրորդ խոշոր քաղաքի՝ Լենինականի և մերձակա շրջանների (Արթիկի, Ախուրյանի, Աղինի) բնակիչների զգալի մասի խոսակցական լեզուն:

Հայկական ՍՍՌ-ից դուրս բարբառս հանդիսանում է եղացյալական վրացական ՍՍՌ-ի Ախալցիինե, Ախալքալաքի և Բոգդանովկա շրջկենտրոնների և Նրանց հայկական գյուղերի հայերի խոսակցական լեզուն (բացառությամբ Հեղափա, Թորիս, Ռւճմանա, Դիլիֆ և Փոկա գյուղերի, որոնց բնակիչները խոսում են Մշո բարբառով):

Հայ մատենագրության մեջ Կարնո բարբառի մասին ամենահին վկայությունը հասնում է մեր թվարկության 8-րդ դարը: Դիսնիսիս Թբիլիսու քերականության 8-րդ դարի հայ մեկնիչ Ստեփանոս Սյունեցին Հայաստանի ծայրագավառացին բարբառների («զրասոն զեզերականս») մասին խոսելիս հիշատակում է նաև «զՍպերացինք», այսինքն Մպերի խոսվածքն իրեն բարբառ:

¹ Տե՛ս Հ. Աճառյան, «Աւրգագիծ և գասավորություն հայ բարբառների», Էմին, Աղգ. Ժողովածու, Հատոր Թ., 1911 թ., էջ 104:

² Տե՛ս Հ. Աճառյան, «Հայերեն զավառական բառարան», Էմին, Աղգ. Ժողովածու, Հատոր Թ., 1913 թ., էջ 2:

³ Տե՛ս Ն. Ակոնց, «Արուեստ Դիսնիսիսի բերականի և հայ մեկնութիւնը նորին», Պատերազմ, 1915, էջ 187:

13-րդ դարում հովհ. Երգնկացին Թրակացու քերականության կոմենտարիաներում կրկնում և վավերացնում է Ստ. Սյունեցու հիշատակած այդ բարբառների գոյությունը, որը կարելի է զիտել որպես Կարնո բարբառի մասին երկրորդ վկայությունը:

Կարնո բարբառը 17-րդ դարում իր գոյությունը զգալ է տալիս նույն գարի պատմիչ Հակոբ Կարնեցու գործերում. 19-րդ դարում Կարնո բարբառով գրվել են բազմաթիվ հոդվածներ, առանձին գրքեր, պիեսներ, հավաքագրվել և գրի են առնվել ժողովրդական բազմաժանր ստեղծագործություններ, բայց այդ բոլոր գրվածքները ունեն մի հիմնական թերություն՝ գրված են ոչ գիտական տառադարձությամբ, ուստի և չեն ներկայացնում բարբառի հարազատ հնչյունական սիստեմը:

Հենց նույն գարում կատարվել է բարբառի մասնակի ուսումնասիրության փորձ. ուսւ լեզվաբան Ա. Տոմսոնը¹ 1887 թ. հրատարակած «Լեզվաբանական հետազոտություններ» հոդվածաշարքում համառոտակի տեղեկություն է տալիս Ախալցիխեի խոսվածքի հնչյունաբանության և ձեւաբանության մասին². Այդ աշխատության մեջ, սակայն, տեղ են գտել բարբառի լեզվական որոշ իրողությունների ոչ հիշտ պատկերացումներ. Հեղինակը երբեք չի եղել Ախալցիխեում, չի լսել բարբառի կենդանի խոսքը, բարբառին ծանոթացել է Հ. Գեղամյանցի «Զանիաթ-զանիաթ» կատակերգության (որի ուղղագրությունը ունի գրաբարյան ձևեր, նույն բառի տարբեր գրություններ) և ախալցիխեցի մի վաճառականի միջոցով, որը կարճ ժամանակով գտնըվելիս է եղել Պետերբուրգում։ Ահա այս հանգամանքը ուսումնասիրության վրա ունեցել է այն հետեանքը, որ հեղինակը չի տիրապետել նկարագրված բարբառին, չի կարողացել տալ բարբառի գիտական տառադարձությունը և փաստորեն տվել է հայերեն հնչյունների տառադարձությունը՝ անկախ նրանց բարբառային արտասանությունից. այդ պատճառով ո՞նչ շփոթել է օ-ի հետ, գ-ն տառադարձել է տ, գոյականների հոլովան մասին խոսելիս բացառական հոլովի վերջավորությունը էն-ի փոխարեն սիալ կերպով համարել է է-ն, անտեսել է բարբառի բաղաձայնական քառասութեան սիստեմը և այլն։ Այս թերություններով հանդերձ Տոմսոնի հիշյալ աշխատությունը, իր-

1 А. Томсон. „Лингвистические исследования“, том I, СПб, 1887 г.

Քե Ախալցիխեի խոսվածքի ուսումնասիրության նախնական փորձ, հանդիսանում է ուշագրավ երեսությայ բարբառագիտության պատմության մեջ:

Կարնո բարբառի մասին հակիրճ տեղեկություններ կան պրոֆ. Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» և պրոֆ. Ա. Ղարիբյանի «Համառոտություն հայ բարբառագիտության» աշխատությունների մեջ:

Առեւյն աշխատությունը հանդիսանում է Կարնո բարբառի հնչյունաբանության և ձեւաբանության ամբողջական ուսումնասիրությունը: Աշխատության առաջին մասն ընդգրկում է բարբառի հնչյունաբանության մանրամասն նկարագիրը (հնչյուններ, նրանց գասակարգումը, հնչյունափոխություն և այլն), երկրորդ մասում ուսումնասիրության հիմնական առանցքն է կազմում բարբառի ձեւաբանությունը (խոսքի մասեր, հոլովում, խոնարհում). հենց այս մասումն էլ խոսվում է բառակազմական իրողությունների և շեշտի մասին: Աշխատության վերջում տըրգած է համառոտ տեղենկություն բարբառի արդի գիծակի մասին՝ ժամանակակից հայերենի ազգեցության տակ բարբառի լեզվական իրողություններում կատարված փոփոխությունների մասին: «Հավելվածում» տրված են բարբառից մի քանի նմուշներ և բավական ընդգրածակ բառարան դիտական տառադարձությամբ:

Բարբառի շարահյուսության ուսումնասիրությունը չի հանդիսացել մեր այս աշխատության նպատակը, և եթե մենք անուղղակի կերպով ու շատ համառոտակի կանգ ենք առել շարահյուսության մի քանի հարցերի վրա, ապա այդ կատարել ենք բարբառի շարահյուսության մասին փոքր ինչ տեղեկություն տալու նպատակով: Բարբառիս շարահյուսությունը հանդիսանում է հետազոտական աշխատանքի առանձին թեմա:

ՀԵՂԻՆԱԿ

Ա. Ռ Ա Պ

Հ Ա Զ Յ Ի Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն

1. ՀԵՂՅՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Կարնո բարբառն ունի հիմնականում 42 հնչյուն, դրանցից ձայնավոր են 6-ը՝ ա, է, ը, ի, ու, օ: Երկարբառներ չկան: Բաղաձայնների թիվը 36 է:

՛, բ, պ, փ

գ, զ, կ, ք

Շ, դ, տ, թ

Ճ, ծ, ծ, շ

Ջ, ջ, ճ, ն

զ, ս

ժ, շ

դ, խ

Վ, ֆ

Ճ, հ

Ա, մ, յ, ն, ր

Բաղաձայնական սխստեմը քառաստիճան է: բացի խուլերից, խուլ շնչեղներից և ձայնեղներից ունի նաև ձայնեղ շնչեղներ, որով և նմանվում է կը ճյուղի Մշո և ում ճյուղի երեանի ու նոր-Ճյուղայի բարբառներին: Հիշյալ հնչյունների արտասանությունը (բացառությամբ ձայնեղ շնչեղների) առանձնապես չի տարբերվում արդի հայերենի արտասանությունից, միայն անհրաժեշտ է նշել, որ բարբառս Մշո բարբառի նման ունի երկու հիմքերը խուլ, մյուսը՝ ձայնեղ (որը տառադարձված է յ տառվ).

Ձայնեղ յ-ն գործածվում է մեծ մասամբ բառակլպում և ձայնավորներից և՛ բաղաձայններից առաջ:

Ինչպես՝ յանդանջ (ականջ), յարուն (արյուն), յաշկերդ (աշակերտ), յղուղ (ուղեղ), յղունդ (եղունդ), յզգալ (զգալ):

Բացի վերոհիշյալ հնչյուններից բարբառումս կան՝ ա, օ, և քմային (վերին բարձրության) ձայնավորները, որոնք բացառությամբ մի քանի բառերից (շաքար, մարթագ, մարմառ) գործ են ածվում հիմնականում թուրքերենից փոխառյալ բառերում. ինչպես՝ ծրգագ (բադ), քօթագ (ծեծ), քյուդ (բութ, հաստակող, անդամալույծ), սւզուրմիշ էնէլ (հնարել):

2. ՀՆՁՅՌԻՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ա. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.

2. Ա. ձայնավորը կարնո բարբառում բոլոր դեպքերում՝ թե բառակիզում, թե բառամիջում և թե բառավերջում արտասանվում է մաքսոր (բաց) ա. ինչպես՝ ամիս-ամիս, անփորձանիօրց, ալիւր-ալուր, ազատ-ազագ, աւազան-ավազան, հաց-հաց, կարդալ-կարթալ, գուլպա-գուլբա:

3. Բազմավանկ բառերի մեջ ա, եթե դանվում է երկու բազաձայնների միջև երկրորդ վանկում սղվում է. ինչպես՝ բաժանել-քածնէլ, հաւատալ-հավտալ, հասանել-հասնէլ, ճանաչել-ճանչէլ, արածել-արձէլ, հաւանիլ-հավնէլ, ելանել-յէնէլ, սատակել-սաղգէլ, աշակերտ-յաշկէրդ, անալի-անլի, կոճակել-կօճգէլ, շալակել-շալզէլ, հարսանիք-հարսնիք, կատաղիլ-կադզէլ, հաւասրամաքաւար և այլն:

4. Մի քանի բաղաձայնների կուտակման գեպքում ա-ի փոխարեն բարբառու ունի ը. ինչպես՝ հաւասարել-հաֆսըրէլ, կարկատել-կարգըրէլ, կարդացվոր-կարթըրզօր, ամաչկոտ-ամբըշգօր, հիւանդանալ-հիվընդնալ, Մարգարիտ-Մարքըրիդ, մեղադիրել-մէխտըրէլ, չարչարել-չարչըրէլ, պատանքել-պադընքէլ, պատառել-պադըրէլ, թամամել-թըմմէլ, կակազել-կագըզէլ:

Մանրություն 1.— Վերոհիշյալ օրենքներին են ենթարկվում նաև այն բայերը, որոնք գրաբառում ունեն անալ վերջագործությունը, ընդուրում՝ բռն բայերը միջաձայն ա-ն և՝ պահպանում են, և սղում, և հնչյունափոխում ը-ի. ինչպես՝ իմանալ-իմանալ, դիմանալ-դիմանալ, մոռանալ-մօռ-

նալ, վերանալ-վէրնալ, մտանել-մըդնէլ, հասկանալ-հասկը-նալ, մինչեռ անվանական բայերը (ածականներից կազմված) կամ պահպանում են միջաձայն ա-ն ինչպես՝ ծերանալ-ծէրանալ, կամ սղում՝ ինչպես. գողանալ-գօղնալ, լայնանալ-լէննալ, փայտանալ-փաղնալ կամ փէդնալ, շատանալ-շադնալ, ծանրանալ-ծանդընալ, նեղանալ-նէղնալ:

Վերջին կարդի բայերից երկուսը ա-ի դիմաց ունեն քնաստանալ-քաստընալ, կարճանալ-կարջընալ:

5. Երկվանկ բառերն իրենց երկրորդ վանկի ա ձայնավորը թեքման ժամանակ՝ շեշտի տեղափոխության պատճառով, կորցնում են կամ հնչյունափոխում ը-ի, որոնց համար կայուն օրենք գոյություն չունի, ինչպես՝ օչխար-օչխըրի, յանգանջ-յանգըջի-յանգըջէն, պառավ-պառովի, շաբաթ-շաբթի, քաղաք-քաղքի-քաղքէն, բէրան-բէրնի-բէրնօվ, մարաք-մարքի, աման-ամինամօվ, փէսա-փէսի, ախքադ-ախքըդի:

Սանրուրյուն 1.— Բարբառս ը ունի նաև բոլոր կրկնավոր բառերի միջին ա-ի դիմաց՝ չարչարել-չարչըրէլ, վախվախել-վախվըրէլ, վազվազել-վազվըզէլ:

6. Այն բոլոր բառերը, որոնք գրաբարում կազմվում են անոց մասնիկով, բարբառս կազմում է նոց մասնիկով. ինչպես՝ ծառանոց-ծառնօց, մեկանոց-մէգնօց, չորսանոց-չօրսնօց, մինչդեռ ական ածանցով կազմված բառերը պահպանում են իրենց ա-ն՝ քըսանագան, չօրսագան:

Սանրուրյուն 1.— Ա-ն իբրև հոդակապ՝ բարդ բառեր կազմելիս շատ սակավ է գործածվում՝ հիւանդատես-հիվանդտէս, աղաջուր-աղջուր, արիւնաթաթախ-յարունթաթախ, թոնրատուն-թնդըրատուն:

7. Գրական լեզվից անցած մի քանի բառերում միջավանկի ա-ն պահպանվում է, ինչպես՝ անարատ-անարադ, աւազանավազան, գաւազան-գավազան, դատարան-դադարան, ժառանգ-ժառանգ, կառաւարել-կառավարէլ, բամբասել-բամբասէլ, ազատել-ազադէլ և այլն:

8. Բացի վերոհիշյալներից ա ձայնավորը ենթարկվում է նաև մի քանի մասնակի հնչյունափոխության.

Ա > ը (բառասկըրում և բառամիջում). եղած օրինակներն են՝ ասել-ըսէլ, աղջիկ-ըխչի, կարողանալ-կըրնանալ, ուղարկել-դըրգէլ, հապա-յըրը, տանեցիք-տընէցիք:

ա > է անել-էնէլ, հաղթել-էխտէլ, հարդ-էրթ, դայակ-դա-

յէք, ծագելածէքէլ, վարդավառ-վարթէվօր, մարսել-մէրսէլ, աւել-
լանալ-էվէլնալ, արժան-էժան:
Ա > օ (բառամիջում) միակ օրինակն է թառամել-թօշնէլ
կամ թօռմէլ:
Բառավերջում ա-ն մնում է անփոփոխ:

6

9. Գրաբարյան փակ ե-ի գիմաց բարբառս միավանկ բա-
ռերի սկզբում ունի յի, ինչպես՝ ես-յէս, եղ-յէզ, երբ-յէփ, եփ-յէփ,
(նաև էփ), երգ-յէրք, ել-յէլ, եռք-յէռք:

Բազմավանկ բառերի սկզբում՝ է. ինչպես՝ երազ-էրած,
երինջ-էրինջ, երանի-էրնէդ, երես-էրէս, եղէ-էղա, երերալ-էրէ-
րալ, երեւիլ-էրէվալ, երկու-էրգու, եփել-էփէլ, երթալ-էրթալ, երե-
խայ-էրէխա, եղինջ-էղինջ, երդում-էրթում:

Նաև յի ինչպես՝ երջանիկ-յէրջանիկ, ելնել-յէլնէլ, երկար-
յէրգան, երկիր-յէրգիր, երկաթ-յէրգաթ:

Բառամիջում բոլոր գեղքերում՝ է. օրինակ՝ բերել-ըէրէլ
երերալ-էրէրալ, շերեփ-շէրէփ, վեց-վէց:

10. Ե-ի գիմաց առնենք եղրայր-ախպար (Ախց.), ախ-
պէլ (Լեն.) ձեերում միայն: Ե > ա այս հնչյունափոխումը հա-
տուկ է կը և ում ճյուղի շատ բարբառների և գուցե հնարա-
վոր է բացատրել դ բաղաձայնի ազգեցությամբ. ի գեպ գրաբա-
րում ևս առկա է եղել այս հնչյունափոխությունը: Գրաբարում
դ ք բաղաձայններից առաջ են կարող էր փոխվել ա-ի՝ ինչպես,
եղադ-աղագ, երագոտն-արագոտն:

11. Եռավանկ և քառավանկ բառերի երկրորդ վանկի ե-ի
գիմաց բարբառս ունի ը կամ ոչինչ.

աւելել-ավլէլ, աւերել-ավրէլ, հայելի-հայլի, վայելել-վայլէլ,
երեսուն-յէսուն, գիտենալ-գիդնալ, մոտենալ-մօդնալ, վայե-
լումն-վայլում, ծարաւենալ-ծառվընալ, գերեզմանոց-գէրզմընօց:
Ծանոթություն 1.— Այս կանոնին չեն ենթարկվում:

ա) Գրական լեզվից անցած բառերը՝ բարերար-քարերար,
համբերել-համբէրէլ, արեգակն-յարեքագ, սեպտեմբեր-սէկ-
տէմբէր.

բ) Բարդ և ածանցագոր բառերը՝ աներձագ-անէրցաք, տաշ-
րեկան-տարեգան, յաւելանալ-էվէլնալ, սեւերես-սէվյէրէս:

12. Հետեւյալ բառերում ե-ի դիմաց ունենք ի կամ յի. երեկոյի բիգուն-յիրգուն, երեք-յիրէք, ածելի-ածիլի, լեզու-լի-զու, երեքշաբթի-յիրէքշաբթի:

13. Միավանկ բառերում խ-ից, երկվանկ բառերում դ>ս,
+բաղաձայններից առաջ ե-ի գիմաց ունենք ը հետեւյալ բա-
ռերում՝ մեխ-մըխ, սեղմել-սըխմել նաև ճեղք-ճըխք:

5

14. Բառասկզբում, չնաշված հնչյունափոխությամբ ստացված է-ն, բայց ե-ով սկսվող երկու բառ կա՝ էշ, էգ- էք:

15. Է-Ն ՖԻՌԱՄ Է ԱՆԺՈՎՈՒԽ ՆԱԽ ԲՐԱԿԱՄ Իջում ու ԲՐԱԿԱՄ ՔԵՐՁՈՒՄ. ՕՐԻՆԱԿ՝ կէս-կէս, ամէն-ամէն, յամմէն, պէս-պէս, օրէնք-օրէնք, սէր-սէր, տէր-տէր, շէն-շէն, մարգարէ-մարգարէ:

Բառավերջում է հանդիպում ենք նաև բացառական հոլովի վերջավորությունում (քաղքէն, տընէն, միննաթէն կամ մուննաթէն) ինչպես նաև ուրին վերջածանցին համապատասխանող ուրին ածանցում (ծանգութէն, խըռօվութէն).

16. Թեքման և բարդման ժամանակ շեշտի տեղափոխության պատճառով է-ն հնչյունափոխվում է ի-ի և ը-ի.

Է > ի էշ-ի զու, էծ-ի ծու, պէր-պիլու, տէր-աթիրէլ, պէզ-պիզէլ,
կէս-կիսէլ, էգ-ի գի, սէր-սիրէլ:

$\mathfrak{b} > \mathfrak{p}$ $\neg q \text{ is } (\mathfrak{p})$ $\neg q \text{ is } \mathfrak{p}$

4

17. Բառակկրում ըն ոչ միայն մոռւմ է անփոփոխ, ինչպես՝ բնկեր-յընդէր, այյե ավելի խտ կիրառում ունի: Եթե արդիքրական լեզվում սկ, սպ, ստ, սք, սփ, սթ, շկ, շպ, շտ, զբ, զգ կապակցություններից առաջ լսվում է մի թույլ ը, և չեղավում, ապա կարնու բարբառում այդ կապակցություններից տուած լսվում է այնպիսի զորեղ ք, որ անհրաժեշտ է գրությամբ արտահայտել: ինչպես՝ սպանազ-ըսպանլիի, սկսել-ըսկըսէլ, շտապել-ըշտաբէլ, ստեղծել-ըստեղձէլ, սփափէլ-ըսփօփէլ:

Բառասկզբում գործ է ածվում՝ նաև՝ ա) հնչյունափոխությամբ տռաջացած բառերում, ինչպես՝ ըսէլ, Ըսկուն (տես §§ 8, 20, 32), բ) թուրքերենից փոխառյալ և լայն առարձում գտնած քշաբ—ահավասիկ, ձենց բառում:

18. Բառամիջում ը լսվում է և գրվում բոլոր այն դեպքերում, եթե մի քանի բաղաձայններ իրար են հաջորդում. ինչպես՝ քրտնիւ-քըրդընէլ, կշտանալ-կըշտանալ, թմրիլ-թըրմուէլ: Հատկապես գաղտնավանկերում՝ ծանր-ծանդըն, սանր-սանդըն: Բառամիջում հնչյունափոխության միջոցով առաջացած ը-ի մասին տես §§ 4, 13, 20, 22, 29:

19. Գրաբարում բառավերջում ը չենք հանդիպում, մինչդեռ բարբառներում (բացի Վանի բարբառից), ինչպես նաև արդի գրական լեզվում, բառավերջում ևս հանդիպում ենք ը՝ իրեռորոշյալ հոդ: Այս ընդհանուր կանոնից զերծ չէ նաև Կարնորաբարառու:

ի

20. Ամենուրեք արտասանվում է ի: Բառասկզբում՝ շեշտված վանկում մնում է անփոփոխ, ինչպես՝ իմ-իմ, ինս-իննը, ինձ-ինձ, ինչ-ինչ: Շեշտից առաջ ի-ն կամ պահպանվում է, ինչպես՝ իմաստուն-իմաստուն, իննսուն-իննըսուն, իմանալ-իմանալ, կամ հնչյունափոխվում ը-ի, ինչպես՝ իսկի-ըսկի, ինչի-ընչի, ինձ-ընձի, իսկունի-Ըսկուն, իննանց-ըննօց, ինչացու-ընչացու:

21. Միավանկ և երկվանկ բառերի բառամիջի ի-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ հին-հին, գիր-գիր, միս-միս, չիր-չիր, գինի-գինի, սիսեռն-սիսէռ, շապիկ-շաբիկ, կացին-կացին, կարմիր-կարմիր, պատիժ-պադիճ:

22. Բազմավանկ և երկվանկ բառերի միջին ի-ն սղվում կամ հնչյունափոխվում է ը-ի միայն հետեւյալ բառերում՝ իրիկուն-յիրգուն, հանդիպել-հանդըրէլ, շիտակել-շըդգէլ, հիմա-հըմի, լիզել-լըզէլ:

23. Վերջավանկի և բառավերջի ի-ն սովորաբար մնում է անփոփոխ, ինչպես՝ կաւշիկ-կօշիկ, գարի-գարի, որբեւայրի-օրփէվիչի, հոգի-հօքի, բարի-քարի:

24. Արդի հայերենի նման բարբառումն ես, եթե վերջին վանկի շեշտը անցնում է հաջորդ՝ նոր ավելացած վանկին, վակ վանկի ի-ն փոխվում է ը-ի, ինչպես՝ սիրդ-սըրդի, ժիր-ժըրէլ, ճիլ-ճըլօդ, քիզ-քըզէլ, միս-մըսի, քիթ-քըթի, գինջ-գընջանալ, կամ սղվում՝ մօխիր-մօխրի-մօխրակօլոլ, ամիս-ամսաթիվ:

25. Ի-ով վերջավորվող մի շարք միավանկ բառեր բարդ-ման և ածանցման ժամանակ չեն ենթարկվում վերոհիշյալ կառնոնին. ինչպես՝ Ճի-Ճիյավօր-Ճիյատէր, գի-գիյագ, թի-թիյագ:

26. Միավանկ բառերում և նրանցով բարդված ձեերում դրաբարյան ո-ի դիմաց կարնո բարբառը բառասկզբում ունի օ կամ վօ. ինչպես՝ ոտն-վօդք, ոսպ-վօսպ, ով-վօվ (վէվ), որը-վօրը, ոնդ-վօնդ, որբ-վօրփ, որ-օր (շաղկապ), երբ որ-յէփօր:

27. Բազմավանկ բառերի սկզբում ո-ի դիմաց՝ միշտ օ, ինչպես՝ ոռնալ-օռնալ, ոսկոր-օսկոր, ոչխար-օչխար, ոլորել-օլը-րէլ, ոլոք-օլօք, ոսկի-օսկի, ողպղել-օղպէլ, որոճալ-օրօճալ:

28. Բառամիջում՝ միշտ օ՝ մոմ-մօմ, հող-փօղ, հոտ-փօդ, գործ-գործ, ցորեան-ցօրէն:

29. Բազմավանկ բառերում միջին ո-ն ընկնում է կամ հնչյունափոխվում ը-ի. ինչպես՝ ոլորել-օլըրէլ, ոովորիլ-օօրփէլ, խորովիլ-խօրփէլ, ժողովել-ժօղփէլ, կոտորատել-կօդըոդէլ, բորբո-սնիլ-քօրփըսնէլ, կոտորել-կօդուէլ, մոլորիլ-մօլըրէլ, թոռամիլ-թօռ-մէլ, ողողել-օղփէլ, խոշորանալ-խօշըընալ:

Մանրորյուն 1.— Այս կանոնին չեն ենթարկվում՝ ա) ուս > օդ ածանցով բարդված բառերը՝ մըստիլ-մըրօդէլ, թեփոտիլ-թէփօդէլ և այլն, բ) այն բառերը, որոնց վերջի ո-ն ածան-ցական է, ինչպես՝ շնորհաւորել-շընափօքէլ, բանւոր-քան-փօր, գ) գրականից անցած հետելյալ բառերը՝ ողորմի-օղօր-մի, որոտում-օօրօդում, յաջողութիւն-աչօղութէն, փիլիսո-փայ-փիլիսօփա, համոզել-համօզէլ, քարկոծել-քարկօծէլ, դ) առաջին վանկում ը ունեցող բառերը՝ ցնորիլ-ցընօրէլ, դըռշմել-դըրօշմէլ:

30. Ո-ն ենթարկվում է հետելյալ մասնակի փոփոխություն-ների.

Ո>ու որտեղից-յուրդից, ծոմ-ծում

Ո>ի մորուսմիրուք

Ո>ը թոնիր-թընդիր

Ո>ա. որոճ-արօճ (նաև օլօճ):

31. Բառի սկզբում սովորաբար մնում է ու, ինչպես՝ ութ-ութը, ունեմ-ունիմ, ուտել-ուգէլ, ուրագ-ուրաք, ուսի-ուսի:

Բառասկզբում զ, խ բաղաձայններից առաջ հետելյալ բա-ռերում անշեշտ ու-ի դիմաց բարբառս ունի ը կամ ոչինչ. ուի-տաւոր-ընտափօր, ուղարկել-զըրգէլ, ուղղորդ-ուղորթ-զօրթ:

Ալղեկ բառում՝ ու-ի գիմաց ունենք յ—յզուզ:

32. **Բառամբջում՝ ա) շեշտի տակ և տուաջին վանկում ուն միում է անփոփօխ, ինչպես՝ ձուկն-ձուզ, տուն-տուն, քուն-քուն, տուաւուն-յառգուն, ցուրտ-ցուրդ: Բացառություն է կազմում՝ դլախ-գըլօխ ու > 0 հնչյունափոխությամբ, բ) երկվանկ բառերի անշեշտ վանկի ու-ի և այն բազմավանկ բառերի ու-ի գիմաց, որին հաջորդում է ա, ունենք վ, ինչպես՝ նուէր-նըլէր, պատուէր-պազգէր, չուան-չվան, տոտուած-տաված, գ) բազմավանկ բառերի անշեշտ ու-ի գիմաց ունենք ը կամ ոչինչ, ինչպես՝ տոուտուր-տոգուր, զրուցել-զըլցէլ, տասնումեկ-տասնըլէկ, բունէլ-ըբոնէլ, բունկալ-ըլընգալ:**

Ծանոթություն 1.— Այս (գ) կանոնին է ենթարկվում նաև անցողական բայերի ուցանել ածանցը. օրինակ՝ հարցուցանել-հարցընէլ, նստեցուցանել-նըստէցընէլ, հալեցուցանէլ-հալէցընէլ:

2. **Այս կանոնից բացառություն են կազմում՝ ուրին>ուրին ածանցով կազմված բառերը՝ մեծութիւն-մէնձութէն, պարապութիւն-պարաբութէն, բ) զրական լեզվից անցած բառերը՝ համբուրել-համբուրէլ, ուսումնական-ուսումնագան:**

33. **Վերջնափանկի ուն թեքման ժամանակ կամ սպիտմ է կամ հնչյունափոխում ը-ի, ինչպես՝ օքուդ-օքդի, հալուստ-հարըստի, թուխտ-թըխտի, պրդուդ-պըդդի, ժողովուրթ-ժօղօվըթի:**

Բառավերջի ուն շեշտի տակ միում է անփոփօխ՝ կատուկագու, լեզու-լիզու, լու-լու, մեզումէզու:

34. **Շեշտի տեղափոխման պատճառով ու ձայնափորը կրում է հնտեյալ փոփոխությունները՝ ա) փակ վանկում փոփոխմ է ը-ի կամ սպիտմ, ինչպես՝ սուք-սըքօր, գուս-գըռան, թուխտ-թըխտի, ֆուռ-ֆըռընձի, կուդ-կըդի, ժում-ժըմի, մուգ-մըգի, չուգ-չըգգի, չամուշ-չամոոդ, բ) բաց վանկում դառնում է վ, ինչպես լու-լվի, կադու-կադվի, լիզու-լիզդի-լիզվանի, մէզումէզդի:**

Ա մ փ ո փ ո ւ մ

35. **Ի մի բերելով կարնո բարբառի ձայնափորներին վերաբերող հնչյունական երեսոյթները, մի կողմ թողնելով մասնակի դեպքերը, կստանանք հնտեյալ ընդհանուր պատկերը:**

Բարբառու ունի հույնքան ձայնավոր հնչյուն, որքան գրաբարը, քմայնացած ան, օն, ու հանդիպում ենք հիմնականում փոխայլ բառերում։ Ձայնավորների փոփոխությունը մեծ չէ:

ա) Ա ձայնավորը բոլոր գեղքերում հնչվում է մաքուր (բաց) ա։ Բազմավանկ բառերում երկու բաղաձայնների միջև գտնվող ան սպիտակ է (շալակել-շալգէլ) մի քանի բաղաձայնների կուտակման գեղքում հնչյունափոխում է ը-ի (հիւանդանալ-հիվլնդնալ), երկվանկ բառերի երկրորդ վանկի ան թեքման ժամանակ կարող է ընկնել կամ հնչյունափոխվել ը-ի (բէրան-ը՛էրնի, օչխար-օչխրըրի)։ Գրաբարյան ա-ի դիմաց բարբառումի քանի բառերում ունի ը, է, (ասել-ըսէլ, անել-էնէլ)։

բ) Գրաբարյան ե-ի դիմաց բարբառու միավանկ բառերի սկզբում ունի յէ, բազմավանկ բառերի սկզբում՝ յէ (ես-յէս, երկու-էրգու, երկաթ-յէրգաթ)։ ուրեմն զանազանում է ե, է հընչյունները։ Մի քանի բառերում ե-ի դիմաց ունի ի, ը, կամ ոչինչ (լեզու-լիզու, մեխ-մրխ, աւելել-ավլէլ)։

գ) Բոլոր գեղքերում էն մնում է անփոփոխ։ Շեշտի տեղափոխման պատճառով դառնում է՝ ի, ը (էծ-իծու, գեա(ի)-գըրա)։

դ) Բարբառումը ը գոյաւթյուն ունի և՛ բառասկզբում, և՛ բառամիջում (երբ մի քանի բաղաձայն իրար են հաջորդում) և՛ բառավերջում։

ե) Են հնչվում է բաց ի, անփոփոխ է մնում բառասկզբում՝ չեշտված վանկում, բառամիջում և վերջում դարձյալ շեշտի տակ (իմ-իմ, գինի-պինի, գարի-քարի)։ Գրաբարյան ի-ի դիմաց բառասկզբում չեշտից առաջ ունի ը (ինձ-ընձի), բարդման կամ թեքման ժամանակ շեշտի տեղափոխության պատճառով ի-ն հնչյունափոխում է ը-ի կամ սպիտակ (ժիր-ժըրէլ, մօխիր-մօխրի)։

զ) Գրաբարյան ո-ի դիմաց բառասկզբում ունի օ կամ վօ (ոջիլ-օջիլ, որբ-վօրփ), բառամիջում՝ միշտ օ։ ուրեմն բարբառուաբերում է ո և օ հնչյունները։ Մի քանի բառերում հանդիպում ենք ո-ի անկման և ը-ի հնչյունափոխվելու գեղքերի (ժողովել-ժօղվէլ, մոլորիլ-մօլըրէլ)։

է) Բառասկզբում և բառամիջում չեշտի տակ ուն մնում է անփոփոխ։ Երկվանկ բառերի անշեշտ վանկում ու-ի դիմաց ունի վ (նուէր-նըրվէր)։ Թեքման ժամանակ ուն սպիտակ կամ հընչյունափոխում է ը-ի (օքուգ-օքդի, հարուստ-հարըստի)։

Բ. ԵՐԿԲԱՐԲԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.՝

36. Այ երկրարբառի դիմաց միավանկ և բազմավանկ բառերի սկզբում թե շեշտի տակ, թե շեշտանախորդ վանկում բաղաձայնից առաջ Ախալցիխեի և Ախալքալաքի խոսվածքներում հանդիպում ենք ա, լենինականի խոսվածքում՝ է ձայնավորները: Այս օրենքին ենթարկվող բառերն են այծ-ած, էծ, այրելէրել, այր-ադ, էդ, այլ-ալ, էլ, այն-ան, էն, այրիկ-էրիգ, այգուցէքուց:

37. Բառամիջում թե շեշտի տակ և թե առանց շեշտի դարձյալ ակամ է, ինչպես՝ ժայռ-ժէռ, լայն-լան-լէն, լայնք-լէնք-լանք, ձայն-ձէն, փայտ-փադ, փէդ, ծայր-ծէր, եղբայր-ախպէր, ախպար, երկայն-յէրգէն, յէրգան, կայծակ-կէծագ, որբեւայրի-օրփէվէրի, օրփէվարի, գայլ-գէլ, գալ, սայլ-սէլ, սալ, ծայգ-ծէք, հայրհար, հէր, սկեսրայր-կէրսար, ի վայր-վար, տարգր-տաքր, տէքր, քայլել-քէլէլ, քալէլ, մայր-մար, մէր, տղայք-տըղէք, տղաք, մի-այնակ-մէննադ:

38. Զայնավորներից տուաջ գրականից անցած բառերում բառամիջում այ երկրարբառի դիմաց բարբառո ունի այ երկնչնչյունը: Այս օրենքին իրք օրինակ կարող են ծառայել՝ դայակ-դայէգ, նայիլ-նայէլ, մայիս-մայիս, վայելել-վայլէլ, խնայիլ-խընայէլ, ծառայիլ-ծառայէլ, պայծառ-պայծառ, վայլել-վայլէլ, հայութիւն-հայութէն, տղայութիւն-տղայութէն (նաև տղութէն), երեխայութիւն-էրէխայութէն (նաև էրէխութէն), հայելի-հայլի:

39. Միավանկ և բազմավանկ բառերի վերջում, շեշտի տակ այ երկրարբառի դիմաց կտ ա կամ այ երկնչնչյունը, ինչպես՝ ծառայծառ, փեսայ-փէսա, տղայ-տըղա, ի վերայ-վըրա, հաւայ-հավա, երեխայ-էրէխա, հայ-հայ, վայ-վայ, արիւնլուայ-յարունլրվա:

40. Բազմավանկ բառերում նախաշեշտ վանկի բաղաձայնից առաջ գտնվող այ-ի դիմաց հանդիպում ենք ը հետեւյալ բառերում՝ երկայնութիւն-յէրգընութէն, երկայնացնել-յէրգընցընել, եղբայրութիւն-ախպըրութէն:

Նանորույրյուն 1.—Փայծախ-փիծէխ բառում այ երկրարբառի դիմաց ունենք ի:

41. Գրաբարի աւ երկրաբրառի դիմաց բառասկզբում և բառամիջում՝ թե շեշտի տակ և թե շեշտանախորդ վանկում բաղաձայնից առաջ բարբառու ունի օ, ինչպես՝ աւրօր, աւրհնելօնէլ, աւծանելօծէլ, աւձօց, ամաւթօմօթ, հաւըհօր, աւգուտօքուր, աւրէնքօրէնք, կարաւանկարօդ, ծանաւթօմանօթ, մաւրուքմօրուք (նաև միրուք), ծնաւղծընօդ, կաւշիկ-կօշիկ:

42. Բառավերջում շեշտի տակ ունի ավ երկնչյունը. օրինակ՝ ցաւցավ, հաւհավ, պառավ-պառավ, հալաւհալավ:

43. Զայնավորից առաջ բառասկզբում, բառամիջում և բառավերջում աւ-ի դիմաց բարբառու ունի ավ երկնչյունը. ինչպես՝ աւել-ավէլ, զաւակ-զավագ, աւազ-ավազ, հաւատ-հավագ, կաւիճ-կավիճ, հաւան-հավան:

Սանրություն 1.— Այս օրենքը իր ուժը պահպանում է նաև՝ ա)

երբ ձայնավորը սղելով աւ-ը մնում է բազաձայնի մաս. օրինակ՝ աւելել-ավէլ, հաւատալ-հավագալ, աւերել-ավրէլ հաւանիլ-հավնէլ, հաւասար-հաֆսար, հաւասարել-հաֆսըրէլ (վերջին երկու օրինակներում վ-ն խլացել է ս-ի ազդեցությամբ, բ) անհոգ բարդության մեջ, երբ աւ-ը գտնըվամ է բաղաձայնի մոտ, ինչպես՝ հաւկիթ-հավիթ, հաւկուր-հաւգուր:

44. Բազմավանկ բառերում աւ-ի դիմաց ավ ունենալով՝ աւ-ի հետագա կորուստով (տես § 3) մնում է միայն վ հետեյալ բառերում՝ ծարաւիլ-ծառավէլ-ծառվընալ, պառափիլ-պառավել-պառվընալ:

45. Աւոր ածանցով կազմված բառերում ա ձայնավորը և պահվում է, և՛ սպիռում, որի համար կայսւն օրենք չկա, ինչպես՝ կեղծաւոր-կէղծավօր, եկաւոր-յէգվօր, սպաւոր-սըքվօր, գատաւոր-գագվօր, թագաւոր-թաքագվօր (նաև թաքվօր=նորափեսա), ծօցավար-ծօցվօր (հզի կին), կարգացաւոր-կարթըցվօր:

46. Աւ-ի փոխարեն հանգիպում են ու, է հետեյալ բառերում՝ յօնք-ունք, աղանիթ-աղունիկ, աւելի-էվէլ, աւելանալ-էվէլնալ: Աւ-ի սպիռում կա առաւտուն-յառպուն բառում:

47. Գրաբարում մեծ մասամբ բառամիջում գործածվող եա երկրաբրառի դիմաց բարբառու թե միավանկ, թե բազմա-

վանկ բառերում շեշտի տակ ունի է կամ ա ձայնավորները: Օրինակները հետեւալներն են սեամշեմ, լետոն.լէո,լեարդ-լէրթ, գայեակ-զայէգ, վառեակ-վառէգ, ցորեան-ցօրէն, կորեակ-կօրէգ, առաջինեակ-յառաջինէգ, վայրկեան-վարկէն, յուրեանց-յիրէնց, ձեան-ձ'ան, սեան-սան, իւրեանք-յիրանք, իրեար-յիրար:

48. Դրաբարում սեռականում եան ստացող բառերը (ուղղ. ին կամ որին ունեցող գոյականները) ստանում են ան. ինչպես՝ մէծութեան-մէնձութան, ծանրութեան-ծանդութան, իւրեան-յիրան, ձեան-ձ'ան, սեան-սան: Նույն կանոնին են հետեւ վում՝ տեղեակ-տէղագ, անկեալ-անգալ բառերը:

49. Դրաբարյան ե խոնարհան բայերի հրամայական եզրի եա վերջավորության և անցյալ գերբայների եա(1)-ի փոխարեն բարբառս ունի է, ինչպես՝ սիրեա-սիրէ, դիզեա-դիզէ, գրեա-գրըէ, գրեալ-գրըէր, խոսեալ-խոսէր, գնացեալ-գընացէր, տեսեալ-տէսէր, բերեալ- բէրէր:

50. Դրականից անցած շատ բառերում եա-ին համապատասխանում է էա կամ յա երկնչյունը, ինչպես՝ լուսաւորեալ-լուսավօրէալ կամ լուսավօրյալ, անցեալ-անցէալ, մատեան-մադէան, համարեա-համարէա, գոնեա-գօնյա նաև գօնէ:

Եաւ

51. Գրաբարում բառավերջումգործածվող եաւ երկրաբառի դիմաց բարբառս ունի էվ, ինչպես՝ սեաւ-սէվ, բարեաւ-քարէվ, առաջեաւ-առջէվ, ըստ որում՝ § 47-ի համաձայն եա-ին համապատասխանում է է իսկ ւ-ին՝ վ բաղաձայնը:

Եաւ-ով սկսվող միակ բառին՝ «եաւթ»-ին համապատասխանում է «օխտը» ձեք:

Եայ

52. Եայ երկրաբառին՝ իբրև որակական ածական կերտող ածանցի, համապատասխանում է է ձայնավորը, ինչպես՝ թըշ-թեայ-թըխտէ, մաղեայ-մաղէ, ոսկեայ-օսկէ, արծաթեայ-յարձրթէ:

Եւ

53. Գրաբարում հաճախ իւ-ով փոխարինվող (ալեւր-ալիւր, բեւր-բիւր) եւ երկրաբառի դիմաց բարբառս և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերում, բոլոր դեպքերում ունի էվ երկնչյունը,

ինչպես՝ արեւ-արէվ, գեւ-զէվ, երեփլ-էրէվայ, թեւ-թէվ, ձեւ-ձէվ,
տերեւ-տէրէվ, հարեւան-հարէվան, անձրեւ-յանձրէվ, ալեւոր-հառ-
լէվօր, հեւալ-հէվալ:

Իւ

, 54. Գրաբարում բառասկզբում իւ ունեն երկու բառ, որոնց
ցից մեկի գիմաց բարբառու ունի յի մյուսի գիմաց՝ յէ, դրանք
են՝ իւրեան-յիրան, իւղ-յէղ:

Սյս երկու օրինակներն էի, սակայն, միմնույն կարգին չեն
պատկանում (մեկը՝ երկվանկ, մյուսը՝ միավանկ): Բացի այդ,
իդ բառը գրաբարում հանդես է գալիս նաև եւդ, եաւդ ձեւերով:
§ 47-ում տեսանք, որ գրաբարյան եա-ին համապատասխանում է
է, հետեւպես իւդ-ի գիմաց յէդ ձեւ շատ օրինաչափ է բարբա-
ռիս համար:

55. Բառամիջում, շեշտված և անշեշտ վանկում (բաղաձայ-
նից առաջ), իւ-ի գիմաց ունենք ու եղած օրինակներն են՝ ձիւն-
ձուն, սիւն-սուն, ալիւր-ալուր, աղրիւր-ափուր, արիւն-յա-
րուն, մրջիւն-մըռջուն, հարիւր-հարուր, ձիւթ-ձութ, նիւթ-նութ,
առիւթ-ասյութ: Եաւ ի՞ կիւրակի-կիրագի բառում:

56. Բառամիջում՝ ձայնավորից առաջ և բառավերջում ունենք
իվ, ինչպես՝ շիւան-շիվան, հիւտնդ-հիվանդ, դիւոտ-դիվօդ, հազիւ-
հազիֆ (վ-ի խլացաւմով), տրծիւ-արձիվ, հաշիվ-հաշիվ, պատիւ-
պագիվ, կոփ-կոսիվ:

57. Վերացական գոյական կերառող ուրիւն ածանցի իւ-ի
գիմաց ունենք է, ինչպես՝ եղբայրութիւն-ախպիութէն, ցածու-
թիւն-ցածութէն, գրութիւն-գրքութէն, մեծութիւն-մէնձութէն:

58. Բառաբարդման ժամանակ բաղաձայնից առաջ գտնի-
ված իւ երկրարբառին համապատասխանող ուն համաձայն § 32-ի
կարող է հնչյունափոխվել ը-ի, օրինակ՝ աղրիւրաջուր- ախպըրի-
ջուր, արիւնլուայ-յարընլովիկ:

59. Բառամիջում դ բաղաձայնից առաջ գտնի-
րասս ունի է, ինչպես՝ գիւղ-զէղ, գիւղացի-գէղացի, շիւղ-շէղ:
Բացառություն են կազմում՝ իւղարեր-Յուղարէր (յատուկ անուն)՝
և ձիւղ-ձուղ բառերը:

Ոյ

60. Բազմավանկ բառերում շեշտից առաջ ոյ շենք հանդի-
րում ոչ միայն բարբառումս, այլև գրաբարում: Շեշտի տակ

թԵ միավանկ, թե բազմավանկ բառերում՝ բառամիջում, ոյ-ի գիմաց բարբառս ունի ու, ինչպես՝ բոյթ-քութ (մատ), բոյն-քուն, թոյլ-թուլ, քոյլ-քուր, լոյս-լուս, ծոյլ-ծուլ, կապոյտ-կառուգ, շոյտ-շուդ, ճկոյթ-ճըգութ, ստոյց-սառուց:

61. Բառասկզբում նույնպես ոյ-ին համապատասխանում է ու ձայնավորը, որի համար, սակայն, ունենք միայն մի օրինակ՝ ոյժ-ուժ:

62. Գրաբարում բառավերջում ոյ հանդիպում ենք՝ գոյականների սեռական հոլովում, ապառնի գերբայում և երեկոյ բառում: Այս բոլոր գեղքերի մեծ մասի ոյ-ի գիմաց ևս ունենք ու, ինչպես՝ մարդոյ-մարթու, ստուծոյ-սածու, քոյ-քու, գալոյ-գալու, ազալոյ-ազալու, երեկոյ-յիրդուն:

Ուա, ուե, ուէ

63. Այս երկրաբառների ու-ի գիմաց բարբառս ունի վեթի ու-ն գանգում է երկու բազաձայներից հետո կամ բառասկզբի բաղաձայնից անմիջապես հետո, վ-ն իրենից առաջ ունենում է ը, ինչպես ազնուական-ազնըգական, շուարել-շըվարէլ, թուել-թըվէլ, լուացք-լըվացք, լուանալ-լըվանալ, ձուազեղ-ձըվաձէղ, չուան-չըվան, չուել-չըվէլ:

Եթե բառամիջում ու-ին նախորդում է միայն մի բազաձայն կամ գագտնավանկ կազմով երկու բազաձայներ, ապա բարբառիս վ-ն իրենից առաջ չի ստանում ը, օրինակ՝ նեխուած-նէխուած (նախանձ), լեզուանի-լիզզանի, աղուէս-աղզիէս, հաշուէլ-հաշզիէլ, թթուաշ-թթվաշ, զզուել-զրզիէլ, ցցուել-ցըվիէլ, կոռուար-կըռովարար, գժուար-գըճվար:

Ա մ ֆ ո փ ո ւ մ

64. Կարնո բարբառը երկրաբառներ չունի: Թրաբարյան երկրաբառների գիմաց բարբառս ունի մի ձայնավոր կամ ձայնափոր+բազաձայն երկինչյունը:

ա) Այ երկրաբառի գիմաց բառասկզբում և բառամիջում կարնո, Ախալցիխեի և Ախալքալաքիի խոսվածքները ունեն աձայնավորը, իննինականի խոսվածքը՝ է ձայնավորը (այդ-ագ, էզ, հայր-հար, էէր): Բառավերջում այ-ի գիմաց ունենք ա կամ այ երկինչյունը (երեխայ-էրէխա, հայ-հայ):

բ) Աւ երկրաբառի գիմաց բառասկզբում և բառամիջում

բազաձայնից տուած բարբառու ունի օ, ձայնավորներից առաջ, ինչպես նաև բառավերջում՝ ավ (աւր-օր, կաւշիկ-կօշիկ, զաւակ-զավագ, ծարաւ-ծարավ):

գ) Եա, եայ երկրարրառների գիմաց բարբառու ունի է ձայնավորը (լեառն-լէռ, թղթեայ-թղթատէ):

դ) Եւ, եաւ երկրարրառների գիմաց՝ եվ երկհնչյունը (աեաւ-սէվ, անձրեյանձրբէվ):

ե) Ոյ, իւ երկրարրառների գիմաց բառամիջում՝ ու (լոյս-լուս, ալիւր-ալուր): Բառավերջում՝ իւ-ի գիմաց ունի իվ, ոյ-ի գիմաց՝ ու (արծիւ-արծիվ, մարգոյ-մարթու):

Գ. ԲԱՐՁՐԱՎԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. ՉԱՅՆԵՎ, ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Բ

65. Բառասկզբում, միշտ գանվելով ձայնավորից առաջ, արտասոնքում է ձայնեղ շնչեղ՝ ը, ինչպես՝ բերել-բէրէլ, բաժանել-քածնէլ, բեմ-բէմբ, բերան-բէրան, բորհել-քօրֆէլ, բամբակ-բամբագ, բարեւու-քարէվ, քիրագի (բալորը), բոնել-քըսնէլ, բերել-բէրէլ, բայն-քուն, բոկիկ-քօրիլիգ, բոժոյ-քօժոյ, բանալ-քանար, քազի (երբեմի), քանորնո (վարսավիր):

Բառամիջում և վերջում ձայնավորներից և մ անգայինից հետո հանգես է գալիս իրահ ձայնեղ՝ ը, ինչպես՝ բամբակ-քամբագ, ամբար-յամբար, ամբաւումբոււ, շաբաթ-շաբաթ, լորի-լորի, խարերայ-խարերա, քարուջ (մաշիկ), մերելագան (բարելական), քիբառ, բամբասել-քամբասէլ, զարիբ-զարիբ:

Մանօքություն 1.—դ>խ բազաձայնի մոտ խլանալով արտասանվում է պ. օրինակներն են՝ եղբայր-տիստ, ափողէր, ազրիւր-տիստուր, ազրիւր-տիստ:

Մանօքություն 2.—ը ձայնորդից հետո հնչվում է խուլ շնչեղ՝ փ, ինչպես՝ արբենալ-հարփէլ, բորբոսնիլ-քօրփիլանէլ, ուրբաթ-ուրփաթ, սուրբ-սուրփի, հարբուխ-հարփիուխ, որբ-փօրփի, երբյակի, լիբրյալիրփի, որբեւայրփ-օրփէլէրփի: Գուցե այս նույն օրենքով բացատրել Ախալցիինեի և Ախալքալափիի խոսվածքներում բերել-փէրէլ արտասանությունը:

66. Բառասկզբում թ-ի նման միշտ գտնվելով ձայնավորից տառջ արտասանվում է ձայնեղ շնչեղ՝ գ. ինչպես՝ գալլ-գալ, գել, գործ-գործ, գողնոց-գօքնոց, գզիլ-գըզիլ, գոմէշ-գօմէշ, Գառապար-Գառապար, Գագիկ-Գագիկ:

Մանորուրյուն 1.—Այս օրենքից բացառություն են կտզմում գիշեր-քըշէր, գցէլ-քըշէլ բառերը:

67. Բառամիջում և վերջում Յ ոնդայինից հետո պահպանում է իր ձայնեղությունը և հանգես է գալիս իրեն ձայնեղ Գ. օրինակ՝ ծունդն-ծունդ, ժանդ-ժանդրաս, հինդ-հինդ, գանդատ-գանդատ, մանգաղ-մանգաղ:

Մնացած բոյոր գեղքերում, նույնիսկ թ ձայնորդից հետո գ-ն արտասանվում է խուլ շնչեղ՝ թ. ինչպես՝ տայգը-տէքը, այշ-գուց-յէքըուց, ագանիլ-հաբնէլ, պագանիլ-պագէլ, սգաւոր-սըքվօր, մգիլ-մըքլէլ կըգամ-գուքամ, յոգնիլ-հօքնէլ, կարգուիլ-կարքը-վէլ, Մարդարիտ-Մարքըրիդ, ուրագ-ուրաք, արեգակն-յարէքագ, ձագ-ձագ:

68. Երբ գ-ն գտնվում է երկու ն-ի միջն, որոնցից տուածինը սպիռում է, ապա այդ գ-ն գտանում է յ: Միակ օրինակն է կանգ-նիլ բայը՝ կանգնիլ-կայնէլ, կանգնած-կայնած, կանգնեցնել-կայ-նէցընէլ:

Գ-ի անկում ունենք չգիտեմ-չիդէմ բառում:

Դ

69. Բառասկզբում միշտ արտասանվում է ձայնեղ շնչեղ՝ գ, ինչպես՝ դուշ-դուն, դուռն-դուռ, դնել-դընէլ, գեալի-գըրա, դմակ-դըմագ, գանակ-գանագ, գեղնուց-գեղնուց:

70. Բառամիջում պահպանում է իր ձայնեղությունը միշտ այն գեղքերում, եթե հաջորդում է ձայնեղ շնչեղների, ինչ-պես՝ գգալ-գըրալ, գգալնոց-գըրգլնոց, գգակ-գըրգակ: Մնացած բոլոր գեղքերում արտասանվում է խուլ շնչեղ՝ թ, ինչպես՝ գագար-գագար, կարգալ-կարթալ, Սեղբակ-Սէթբագ, մեղագրել-մեխթը-րէլ:

Այս վերջին օրենքը այնքան զորեղ է, որ նույնիսկ այն բառերում, որոնց սկզբում դ-ն արտասանվում է ձայնեղ շնչեղ, բարդման ժամանակ հանգես գալով բառամիջում՝ արտասանվում է թ-ի պահպանակը՝ օրինակ՝ գիլ (կողմ)-չօրսթին, ասթին, էսթին:

71. Ն ոնդայինից հետո թե բառամիջում, թե վերջում ար-

տասանվում է ձայնեղ դ, ինչպես՝ զնդան-զընդան; թնդալ-թընդալ, հանդիպել-հանդըրէլ, քանդել-քանդէլ, ցնդիլ-ցընդէլ, խնդալ-խընդալ, գունդալ, գունդ-գունդ:

Սանոթություն 1.— Արդի հայերենի ազդեցությամբ հետեւյալ բառներում ն-ի մաս դ-ն արտասանվում է թ՝ ինդիրք-խրնթիրք, հանդարտ-հանթարդ:

72. Ծ ձայնորդից հետո դ-ն բոլոր զեպքերում արտասանվում է թ, ինչպես՝ որդնել-օրթընէլ, յարդ-էրթ, բուրդ-քուրթ, երդումն-էրթում, արդար-յարթար, վարդ-վարթ, մարդ-մարթ:

73. Բառավերջում ձայնեղությունը պահպանում է ադ, էգ գերանուններում. մյուս գեպքերում դ-ն հաջորդում է ն, ը բազաձայններին, ուր և պահպանվում են §§ 71, 72 օրենքները, ինչպես՝ սարդ-սարթ, ջարդ-ջարթ, ծնունդ-ծընունդ, գունդ-գունդ:

Զ

74. Բառամկըրում հնչվում է ձայնեղ շնչեղ Ճ, ինչպես՝ ձմեռն-ձըմէռ, ձմերուկ-ձըմէրուգ, ձի-ձի, ձայն-ձէն, ձիւն-ձուն, ձեթ-ձէթ:

75. Բառամիջում և վերջում ունենք՝ ա) ն, դ-ից հետո, ուր հանդես է գալիս իրիվ լրիվ ձայնեղ, ինչպես՝ խնձոր-խընձօր, անձրե-յանձըրէվ, պատպանձել-պարընձէլ, բարձր-բանձըր, մաղձ-մազձ, խանձել-խանձէլ, բ) թ-ից հետո՝ ուր արտասանվում է խուլ շնչեղ, ինչպես՝ փորձել-փօրցէլ, արձան-արցան, դարձնել-դարցընէլ, բարձ-բարց, որձ-վօրց, փորձանք-փօրցանք, վրձին-վրցին:

76. Բառավերջում միայն մեկ անկախ օրինակ ունենք, ուր ձ-ն արտասանվում է ց, այն է օձ-օց, մնացած գեպքերում ձ-ն հաջորդում է ն, դ, ը, բ բաղաձայններին, որոնց մասին տեսանք § 75:

Զ

77. Բառամկըրում հնչվում է ձայնեղ շնչեղ Ջ. ինչպես՝ ջուր-ջուր, ջորի-ջօրի, ջարդ-ջարթ, ջոկել-ջօկէլ:

78. Բառամիջում՝ ա) երկու ձայնավորների միջև և իս բազաձայնից հետո՝ խուլ շնչեղ՝ ն, ինչպես՝ արջառ-աչառ (թ-ի անկումով) իջանել-յիջնէլ, հաջել-հաչէլ, յաջողութիւն-աչօղութէն, աղջի(կ)-ըխչի, բ) ն, ը, ո բազաձայններից հետո ձայնեղ՝ ն, ինչպես՝ թնջուկ-թընջուգ, ջնջոց-ջընջօց, թրջել-թըռջէլ, տանջիլ-տանջէլ, առաջի-յառջի, բանջար-բանջար, մրջիւն-մըռջուն:

79. Բառավերջում խրազաձայնից հետո՝ շինչպես՝ ողջ-վօխչ,
առողջ-առօխչ, մնացած բոլոր գեղքերում՝ շինչպես՝ քաջ-քաջ,
մունջ-մունջ, քրոջ-քրօջ, մէջ-մէջ, ականջ-յանդանջ, դոլինջ
(մեջքացավ).

2. ԽՈՒՆ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Պ

80. Պ-ն բառասկզբում մնում է անփոփոխ հնչվում է խուն
ինչպես՝ պանիր-պանիր, պատ-պադ, պատիժ-պադիճ, պսակ-
պըսագ, պատառել-պառուէլ:

81. Բառամիջում և բառավերջում ձայնավորներից և ք
ձայնորդից հետո պ-ն արտասանվում է ձայնեղ թ, ինչպես՝ սա-
պոն-սարօն, շապիկ-շարիկ, հապատանաւ-հըթթունալ, հապա-յըթթ,
պապակիլ-պարագէլ, կերպ-կերը, կապոյտ-կարուգ, պապանձել-
պարընձէլ, վիշապ-վիշար, ապրանք-աբրանք:

82. Բառամիջում և վերջում խուն բազաձայններից հետո
մնում է խուն պ, ինչպես՝ սպասել-ըսպասել, այսպես-ասպէս,
էսպէս, սոպ-փօսպ, սպիտակ-ըսպիտագ, կպչիլ-կըպչէլ, իսկ որն-
գայիններից հետո ձայնեղանում է և հնչվում թ.՝ օրինակ՝
ամպ-ամըր, ձանապարհ-ձամբքա, անտակ-անպադ-ամբագ.

Կ

83. Բառասկզբում կ-ն հնչվում է կ, ինչպես՝ կէս-կէս, կաշի-
կաշի, կանգնիլ-կայնէլ, կանաչ-կանանչ, կաթն-կաթ, կաղին-կա-
ղին, կարաս-կարաս:

84. Բառամիջում և վերջում ս, շ, խ խուն բազաձայննե-
րից հետո մնում է խուն կ, ինչպես՝ տչակերտ-յաշկէրդ, հասկա-
նալ-հասկընալ, կսկուծ-կըսկուծ (նաև կըծկուծ), կոխկըրտել-կօխ-
կըռուէլ, մնացած բոլոր գեղքերում արտասանվում է ձայնեղ գ,
ինչպես՝ ծակել-ծագէլ, ծակատ-ծագագ, դանակ-դանագ, տափակ-
տափագ, երեկոյ-յիրգուն, հաւկիթ-հավկիթ, ականջ-յանդանջ,
քակել-քագէլ, հերկել-հէրգէլ:

85. Յոկ բառի փաղաքշական բոկիկ ձեռում, ինչպես այլ բար-
բառներում այստեղ ևս նախավերջի կ-ն տռնմանմամբ դարձել
է թ և ստացել բօրլիկ ձեր:

Կ-ի անկում ենք նկատում մէմ բառում, որը կազմված է
մեկ-մ անորոշ հոդը (տես § 198):

86. Բառասկզբում արտասանվում է խուլ՝ ա. ինչպես՝ տախուտակ-տախտագ, տայգր-տէքը, տուն-տուն, տարի-տարի, տեղ-տեղ, տեսնել-տէսնէլ և այլն:

87. Բառամիջում երկու ձայնավորների, ձայնեղ բաղաձայնի և ձայնավորի միջն արտասանվում է ձայնեղ դ. ինչպես՝ մօտիկ-մօտիգ, գաղտուկ-գօղդուց, քրտնիւ-քըրդընէլ, կատաղել-կադէլ, մտանել-մըդնէլ, գտանել-գըդնէլ, պուտուկ-պուդուգ, անտէր-յանդէր:

88. Բառավերջում ձայնավորից և ձայնեղ բաղաձայնից հետո՝ դ. ինչպես՝ գանգատ-գանգագ, աշակերտ-յաշկէրդ, ոււտ-ուուգ, խախուտ-խախուգ, աղտոտ-աղդօդ, ժանգոտ-ժանգոօդ:

89. Ս, շ, խ խուլերից հետո թէ բառամիջում, թէ վերջում մնում է խուլ՝ ա. ինչպես՝ աստառ-աստառ, հաստ-հաստ, բշտել-բշտէլ, գատաստան-գադասատան, կուշտ-կուշտ, հաստատ-հաստագ, խոստանալ-խօստընալ, սիստոր-սրխտօր:

90. Տ-ի անկում ենք նկատում, երբ գտնվում է երկու բաղաձայնների միջն. եղած օրինակներն են՝ պաշտպան-պաշպան, աստղ-ասիս, աստղանի-ասխանի, աստված-ասված, Աստղիկ-Ասխիգ:

Մանրորոյն 1.—Այս օրենքը ուժի մեջ չի լինում, երբ բաղաձայնները բաժանվում են ը ձայնավորով, ինչպես՝ քրտնել-քըրդընէլ:

91. Հաջորդական ո, և հնչյաւնների նմանությամբ դառնում է ո, և հնատեյալ բառերում՝ կտրել-կըռուէլ, տետրակտէուուգ, պատուէլ-պառուէլ, պատճառ-պաճճառ, կոտուէլ-կօռուէլ, Պետրոս-Պէռոս:

Մանրորոյն 1.—Ախալցիխեում ա-ն բառասկզբում արտասանվում է ք՝ փ>տ տեղափոխությամբ, փետուր-քէքուր բառում: Բառամիջում թ արտասանվում է փալի-փրթէլ բառում, որը պետք է բացատրել փ-ի ազդեցությամբ:

92. Ծ-ն նույնպես բառասկզբում մնում է անփոփոխ, արտասանվում է խուլ, ինչպես՝ ծանր-ծանրդը, ծայդ-ծէք, ծոց-ծօց, ծալ-ծալ, ծախել-ծախէլ, ծանոթ-ծանոթ:

93. Բառամիջում և վերջում ն ոնդայինին և թ-ձայնորդին հաջորդող ծ-ն արտասանվում է ձայնեղ՝ ծ, օրինակ՝ պարծիւ-

աղարձէննալ, արծաթ-շարձաթ, մեծ-մէնձ, զործ-գօրծ, արածիլ-
արձէլ, կոնծէլ-կօնձէլ, ծոծրակ-ծօրձագ:

Մնացած բոլոր գեպքերում ծ-ն մնում է անփոփոխ, ինչ-
պէս՝ ածէլ-ածէլ, ծիծ-ծիծ, այծ-էծ, ծեծ-ծէծ, լծէլ-լըծէլ, կայծակ-
կէծագ:

Ճ

94. Բառակզբում մնում է խուլ՝ ն, օրինակ՝ ձիւղ-ճուղ,
ճրագ-ճըրաք, ճաշ-ճաշ, ճերմակ-ճէրմագ, ճանաշել-ճանչէլ

95. Բառամիջում և վերջում դ, ն, թ, ո բաղաձայներից
հետո արտասանվում է ձայնեղ՝ զ, ինչպէս ճանճ-ճանջ, կարճ-
կառջ, կնճիռն-կըռինջ-կընջիռ, խիճ-իիխջ, ճենճ-ճէնջ, արճիճ-
արջիճ:

Այլ գեպքերում մնում է ն, ինչպէս՝ ածէլ-ածէլ, կոճակել-
կօճէլ, աճուկ-աճուկ, լրդուճ-քըրթուճ, կաւիճ-կավիճ, կոճ-կօճ,
մաճառ-մաճառ:

ՅՈՒԻԼ ՇՆՉԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

Փ

96. Ամեն գեպքում էլ արտասանվում է փ, ինչպէս՝ բառա-
սկզբում՝ փանջ-փունջ, փուշ-փուշ, փայտ-փափ, փէփ, փոր-փօր.
բառամիջում՝ չափել-չափէլ, չփել-չըփէլ, թափել-թափէլ, փա-
փախ-փափախ, փափակ-փափափ. բառավերջում՝ չերեփ-չէրէփ,
չափ-չափ, ծափ-ծափ, եփ-էփ, կանեփ-կանէփ, ծեփ-ծէփ:

Ք

97. Ամենուրեք արտասանվում է խուլ շնչեղ՝ ք. ինչպէս՝
բառասկզբում՝ քաղել-քաղէլ, քոյլ-քուլ, քար-քար, քիթ-քիթ,
քսան-քըսան, քենի-քէնի:

Բառամիջում՝ շաքար-շաքար, զոքանչ-զօնքանչ, աքան-ցա-
րան-աքան-ցաքան, այնքան-էնքան, անքան:

Բառավերջում՝ ցամաք-ցամաք, կուրծք-կուրծք, շնորհ-ք-
շընօրք, աղիք-աղիք, քաղաք-քաղաք, ցանք-ցանք:

Թ

98. Սովորաբար բոլոր գեպքերում հնչվում է թ, ինչպէս՝
բառասկզբում՝ թել-թէլ, թոռն-թօռ, թաղել-թաղէլ, թաթախել-
թախէլ, թոյլ-թուլ, թան-թան:

Բառամիջում՝ երթալ-էրթալ, կթել-կթել, աթար-աթար,
թեթե-թէթէվ, թթու-թթու, թիթեռն-թիթէռ:

Բառավերջում՝ շաբաթ-շաբաթ, մուժ-մուժ, ամօթ-ամօթ,
ուրբաթ-ուրբաթ, հաւկիթ-հավկիթ:

Ընդհանուր այս կանոնից բացառություն է կազմում քմբել
րասր, որ արտասանվում է գրմռէլ:

99. Խ հնչյունից հետո բառամիջում և վերջում հնչվում է
ա, ինչպես՝ յաղթել-էխուէլ, թուղթ-թուխտ, մաղթել-մախաել,
գաղթական-գախտական, եօթն-օխտը:

Թ-ի խլացում է նկատվում նաև տարնմանությամբ, երբ
երկու ք հանդիպում են իրար: Եղած օրինակներն են՝ փաթա-
թել-փաթաէլ, աթուրմաթաթառուրմա (խող): Թ-ի հավելում՝ ու-
նենք օրհնել-օրինէլ բառում:

8

100. Առանց բացառության բոլոր գեղքերում հնչվում է ց,
ինչպես՝ բառասկզբում՝ յանել-ցանէլ, ցուրտ-ցուրդ, ցերեկ-ցէրէվ:
Բառամիջում՝ զբուցել-զբոցէլ, կացին-կացին, խնոցի-խընօցի,
զիւղացի-զէղացի, հարցանել-հարցընէլ, անցանել-անցընէլ:

Բառավերջում՝ գոնվում է մեծ մասամբ ձայնավարներից
հետո՝ հաց-հաց, սպոց-սրոց, ծոց-ծոց, գոգնոց-գօքնոց, ջրադաց-
ջաղաց (նաև ջաղաչք):

9

101. Սովորաբար բոլոր գեղքերում հնչվում է չ, ինչպես՝
բառասկզբում՝ չուան-չըվան, չամիչ-չամիչ, չափ-չափ,
չարչարել-չարչըրէլ, չեչ-չէչ:

Բառամիջում՝ ոչխար-օչխար, փշել-փըշէլ, մինչեւմինչէվ,
կենչել-կանչէլ, փչացած-փչչացած:

Բառավերջում՝ կանաչ-կանանչ, ինչ-ինչ, դունչ-դունչ, չա-
միչ-չամիչ, փուչ-փուչ, գոքանչ-գօնքանչ:

102. Բառավերջում ո ձայնորդից հետո ձայնեղանալով հրնչ-
վում է չ, օրինակ՝ փաթչ-փասչ:

Եյն բոլոր բայերը, որոնք գըտրաբում ունեն չիլ վերջա-
վորությունը, բարբառում հանգեն են գալիս առանց չի: ինչ-
պես՝ թաշիլ-թըռնէր փախչիլ-փախնէր, կպչիլ-կըրնէր գիպչիլ-գըր-
նէր նաև զիրնէր:

Զ

103. Բոլոր գեղքերում էլ և՝ բառասկզբում, և՝ բառամիջում, և՝ վերջում հնչվում է զ, ինչպես՝ զօրք-զօրք, զարդ-զարթ, զարկանել-զարգէլ, զաւակ-զավադ, լիզել-լիզէլ, խուզել-խուզէլ, ազատել-ազագէլ, զզել-զզգէլ, զերեզման-զէրէզման, հազար-հազար, ուզել-ուզէլ, մազ-մազ, խոզ-խօզ, եզն-յէզ, հազ-հազ:

104. Գրական երազ-ի դիմաց բարրառս ունի էրած ձեր, որի պատճառը գժվարանում ենք բացատրել, իսկ ծուազել բառի դիմաց՝ առնմանմամբ ձըվաձէի:

Ժ

105. Սովորաբար հնչվում է ծ: Բառասկզբում միշտ գտընդում է ձայնավորից առաջ, իսկ բառավերջում՝ միայն ձայնավորից հետո, ինչպես՝ ժամ-ժամ (եկեղեցի), ժանդ-ժանդըռ, ժայռ-ժէռ, ժլատ-ժլատ, ժում-ժում, ժամանակ-ժամանագ, ույժ-ուժ, ժախ-ժախ, շարժ-ժաժ, ապառաժ-աբառաժ:

Բառամիջում պատճանում է մեծ մտումբ ձայնավորից և թից հետո, ինչպես՝ բաժանել-բաժնէլ, բաժին-բաժին, յօժար-յօժար, արմել-ամէլ, վարժապետ-վարարէդ:

Պատիժ-պադիճ ձեերում ժ>ձ փոփոխությունը բացատրը-վում է պ-ի առնմանմամբ:

Չ

106. Գրաբարում բառասկզբում դ սակավ ենք հանդիպում. բարբառումս բառասկզբում դ հանդիպում ենք մեծ մասամբ փոխառյալ բառերում, ինչպես՝ զալօդ (յուզոտ), զազմա (քլոնգ) զալչա (տափարի ազգը), զարիբ-զարիր, զաթ (հարկ, շերտ), զավալ (սրինգ), զափաղ (կափարիչ), զույումձի (սոկերիչ), զալիր (կաղապար). և այլն:

107. Բառամիջում երկու ձայնավորի, ինչպես նաև ձայնավորի և ձայնեղ բաղաձայնի միջև մնում է դ, ինչպես՝ ծաղիկ-ծաղիկ, շաղուել-շաղվէլ, մեղր-մեղըր, աղի-աղի, սղոց-սրոց, կատաղել-կաղէլ, գողանալ-գողնալ, գեղին-դէղին, Բաղդասար-Բ'աղդասար, մատղաշ-մագղաշ, Խուլ բաղաձայնի մոտ խլանալով հընչ-վում է խ. ինչպես՝ աղբիւր-ախպուր, եղբայր-ախպէր-ախպար, հաղթել-էխտէլ, թուղթ-թուխտ, աղջիկ-ըխչի, գաղթել-գախտէլ:

108. Բառավերջում դ-ն հնչվում է դ, ինչպես՝ աղ-աղ, գիւղ-գէղ, խաղ-խաղ, իւղ-յէղ, հող-ֆօղ, մաղ-մաղ, ասէղ-ասէղ, ան-ժեղ-ամմէղ:

Մանրություն 1.—Բաղաձայնների կուտակման պատճառով դ-ն սղվել է միայն խղճմտանք-խրճմբտանք բառում:

Ղի կապակցության դիմաց բարբառոս ունի միայն խ. օրինակ՝ բղխել-բըխէլ:

Սղմել բառը արտասանվում է սըխմէլ, թերես սըխ (իիտ) բառի նմանողությամբ:

Վ

109. Բառասկզբում վ-ն մնում է վ. ինչպես՝ վարել-վարէլ, վեց-վէց, վեզ-վիզ, վարպետ-վարբէդ, վառել-վառէլ:

Բառամիջում վ գտնվում է կամ բարերի երկրորդ բարդրիչի սկզբում կամ օ ձայնավորից հետո: Այս երկու պարագաներում էլ հնչվում է վ, ինչպես՝ դար ի վեր-դէրիվէլ, անգախ-անգախ, գեղլրայ-գէղվըրա, խորոված-խօրօված, վարդավառ-վարթէվօր, խոռվել-խըռովէլ, գովել-գօվէլ, ժողովել-ժօղվէլ, սովորիլ-սօրվէլ, կառավարիչ-կառավարիչ:

Բերգած օրինակներում վ-ն գտնվում է ձայնավորներից առաջ: Բաղաձայնից առաջ, եթե բաղաձայնը ձայնեղ է, վ-ն մնում է անփոփոխ, իսկ եթե հաջորդող բաղաձայնը խուլ է վ-ն ևս խլանալով հնչվում է ֆ, ինչպես՝ հաւսար-հափսար, հաւք-հափք, ուժովանալ-ուժօվնալ, համովանալ-համօվնալ:

110. Բառավերջում վ գտնվում է, ներառյալ նաև գործիականի օվ վերջավորությունը, օ ձայնավորից հետո և հնչվում է վ, ինչպես՝ հով-հօվ, ծով-ծօվ, կով-կօվ, ով-օվօվ (նաև վէվ) համով-համօվ, ուժով-ուժօվ, քարով-քարօվ:

Մանրություն 1.—Վ-ի խլացման մասնակի դեպքերից են՝ բառամիջում նաւթ-նափթ, զաւթել-զափթէլ, բովել-բօրֆէլ, բառավերջում՝ հարաւ-հարափ, ետեւ-յէդէփ, հալաւ-հալափ, փրւաւ-փրլափ:

Ճ

111. Բարբառիս բնորոշ հնչյուններից է ձայնեղ ն-ն (յ), որը մեծ մասամբ հանդես է գալիս բառասկզբում բաղաձայններից և նույնիսկ ամենառեղաղ ձայնավորներից (ա, է) առաջ-ինչպես՝ ականջ-յանդանջ, ակ-յագ, ամուր-յամուր, արիւն-յա-

բուն, ետնկիթ-յէղընկիթ, ուղեղ-յզուզ, ոտնաման-յօդնաման, սեհան-յոէան, ուրիշ-յուրիշ:

յ հնչյունը հանդիպում ենք նաև փոխառյալ բառերում որ յաղըթին (կարգին, բավականին), յօդա (սենյակ):

5. ԽՈՒԽԸ ՇՓԱԿԱՆՆԵՐ

Ս

112. Բառասկզբում ձայնավորից առաջ հնչվում է ս, ինչպես՝ սովոր, սեաւ-սէլ, սանր-սանդըս, սալ-սմլ, սիսեռն-սիսո, բաղաձայնից առաջ՝ ըս, կամ սը, ինչպես՝ սպասել-ըսպասէլ, սպանել-սըրանէլ, սգաւոր-սըքվօր, սնդուկ-սընդուգ, ստեղծել-ըստէղծէլ:

113. Բառամիջում և վերջում թէ ձայնավորից և թէ բաղաձայնից հետո՝ ս, ինչպես՝ տնել-ըսէլ, կասկած-կասկած, հարսանիք-հարսնիք, պակաս-պագաս, բորբոսնել-քօրփըսնէլ, միսմիս, թուխս-թուխս, ոսկի-օսկի:

114. Մասնակի գեպքեր.

Թս խումբը արտասանվում է զ, վաթսուն-վացուն (նաև վացցուն) բառում, ան արտասանվում է չ՝ սալոր-շըլօր, սեամշէմ, տասչօրս-տաշչօրս բառերում:

Ա-ի անկում ենք նկատում սկեսուր-կէսուր, սկեսըայր-կէրսար բառերում:

Ա-ի ձայնեղացման միայն մի գեպք ունենք՝ խորիսի-խօրիզ:

Շ

115. Բոլոր գեպքերում էլ հնչվում է շ:

Բառասկզբում՝ շուն-շուն, շերեփ-շէրէփ, շարել-շարէլ, շաղ-վել-շաղվէլ, շապիկ-շաբիգ:

Բառամիջում՝ մաշել-մաշէլ, տաշել-տաշէլ, խարշել-խաշէլ, աշուն-աշուն:

Բառավերջում՝ ակիշ-ագիշ, գոմէշ-գօմէշ, փուշ-փուշ, ուշ-ուշ, անոյշ-անուշ, էշ-էշ:

Սահորորյուն 1.—Նարծ բառաձեկի գիմաց բարբառս ունի ժածձեր, ուր նախաձայն շ-ն ազդվելով հաջորդող ծ-ից առանձմամբ գարձել է Ժ և տեղի է ունեցել ք-ի անկում:

116. Առանց բացառության բոլոր գեղքերում հնչվում է իս, ինչպես՝ խարել-խարէլ, կախել-կախէլ, թաթախել-թաթխէլ, ծախել-ծախէլ, քացախ-քացախ, թուխս-թուխս, գլուխ-գլուխ, կանուխ-կանուխ, խազ-խազ, խմոր-խմոր, ոչխար-օչխար, կախել-կախէլ:

Խ-ի անկման միայն մի օրինակ ունենք՝ խորիսխ-խօրիզ, Խ-ի ձայնեղացման դարձյալ մի օրինակ՝ խակ-ղազ:

8

117. Կարնո բարբառում ֆ հնչյունը բառասկզբում հանդիպում ենք մեծ մասամբ՝ ա) թուրքերենից փոխառյալ բառերում, ինչպես փալճի (բախտագուշակ), ֆարդա (վարագույր), ֆըռն-գիր (հոլ), փիշազ (հրթիռ), ֆըսիր (բժախնդիր) և այլն,

բ) Հ բաղաձայնի հնչյունափոխությամբ, երբ նրան հաջորդում է ո ձայնափորբ, ինչպես՝ հող-ֆօղ, հոտ-ֆօտ (տե՛ս § 118),

գ) գրական հեղվում փ-ով սկսվող մի քանի բառերում, օր՝ փուռ-ֆուռ:

Բառամիջում ֆ հանդիպում ենք ածանցավոր բառերում, ինչպես՝ անփայմ, անֆօղ, կրկնակ ձևերում՝ ինչպես ֆըսֆըսիր, ֆըլան-ֆըստան և վ բաղաձայնի խլացման դեպքում (տե՛ս § 109):

Բառավերջում՝ դարձյալ վ-ի խլացման պատճառվ (տե՛ս § 110):

9

118. Բառասկզբում հնչվում է հ, ինչպես՝ համ-համ, հայր-հէր, հարսն-հարս, հաւ-հավ, հեղ-հէղ: Բացառություն է կազմում՝ հաւտաս-ավդաս (կենինականի խոսվածքում):

Միավանկ բառերի սկզբում, երբ հ-ին հաջորդում է ո ձայնափորբ, հոն դառնում է ֆ, ինչպես՝ հող-ֆօղ, հորթ-ֆորթ, հոր-ֆօր (ջրհոր), հոտ-ֆօտ:

Միավանկներից բարդված բազմավանկ բառերը հետեւղականորեն պահպանում են հ>ֆ հնչյունափոխության այս օրենքը, ինչպես՝ անհող-անֆօղ, անհորթ-անֆորթ: Այլ բարբառներում գործածվող հօս, հօտ, հօն բառերը կարնո բարբառում արտասանվում են՝ ֆօս, ֆօտ, ֆօն:

Երկվանկ և բազմավանկ բառերը այս հնչյունափոխությանը չեն ենթարկվում. ինչպես՝ հոդի-հօքի, հոկտեմբեր-հօգուէմբէր,

բացառությամբ՝ բոհքել բառը, որ թ-ի դրափոխությամբ արտա-
սանվում է բօրֆիկ:

119. Բառամիջում՝ երկու միենույն ձայնավորների միջև
մնում է անփոփոխ, ինչպես՝ սանահայր-սանահէր, նահապետ-
նահաբէդ, քահանայ-քահանա, երկու տարբեր ձայնավորների,
ինչպես նաև ձայնավորի և ձայնորդի միջև հնչվում է յ, ինչ-
պես՝ սահել-սայէլ, պահել-պայէլ, պահմբատցի-պայմբոցի, մտա-
հան-մըդյան, Վահրամ-Վայրամ, գահիճ-զայիճ, Թագուհի-Թա-
քույի (այսպես նաև բոլոր ունի վերջացող անունները): Այս
նկատվում է նաև այն դեպքում, երբ հ-ն լինելով վանկի վեր-
ջին հնչյաւնը, հաջորդ վանկը սկսվում է բաղաձայնով, ինչպես՝
մահուան-մայվան:

120. Բառամիջում, ինչպես նաև բառավերջում թ-ից հետո
հ-ն ընկնում է, ինչպես՝ օրհնէլ-օրթնէլ-օրնէլ, արհամարհել-արա-
մարել, շնորհակալ-շընօրագալ, խոնարհ-խոնար, աշխարհ-աշխար:

Բառավերջում ձայնավորից հետո հ-ն հնչվում է շատ թույլ,
ինչպես՝ մահ-մա(հ), ագահ-աքա(հ):

Սանորույրուն 1.—Հետեյալ բարդ և ածանցավոր բառերը, որոնց
առաջին մասը վերջանում է բաղաձայնով, իսկ երկրորդ
մասը սկսվում է հ-ով, կորցնում են իրենց հ-ն մեկ հատ-
մէադըմ, հինգ հարիւր-հինգարուր, անհամբեր-անամբէր,
անհաւատ-անավագ, այս հեղուան-էսէդվան:

6. ԶԱՅՆՈՐԴՆԵՐ

Լ

121. Առանց բացառության ամեն դեպքում էլ հնչվում է
լ, ինչպես՝ լու-լու, լուանալ-լըվալ, լեզու-լիզու, լայն-լէն, ալիւր-
ալուր, ծիլ-ծիլ, ուլն-ուլ, անալի-անլի, զայլ-գալ-գէլ, թոյլ-թուլ
և այլն: Բոլոր բայերի անցյալ դերբայի լի դիմաց բարբառու-
ունի թ, ինչպես՝ սիրեալ-սիրէր, մոռացեալ-մօռ(ա)ցէր:

Մ

122. Բոլոր պարագաներում առանց բացառության հնչվում
է մ, ինչպես՝ մայր-մար, մէր, մուկն-մուգ, մեծանալ-մէնձընալ,
մենակ-մէննագ, աման-աման, ամիս-ամիս, ձմեռն-ձըմէռ, իմ-իմ,
հոռմ-հոռմ, ծոմ-ծում, գամ-գամ:

Ինչպես մի շարք բարբառներում, այնպես էլ Կարնո բար-

բառում ամմէն բառի մեջ մ-ն կրկնված է իմաստի սաստկություն ցույց տալու համար:

8

123. Գրաբարյան բառասկզբի յ-ի դիմաց բարբառս արդի հայերենի նման ունի ն, ինչպես՝ յիշել-հիշել, յուղիս-հուղիս, յօժաք-հօժաք, յոգնիլ-հօքնէլ, կամ ոչինչ, ինչպես՝ յաղթէլ-էխտէլ, յաջողել-աչօղէ(1), Յովհաննէս-Օաննէս, Օննս:

Բառասկզբում գործ է ածվում փոխառյալ բառերում։ օրինակ՝ յօխուշ, յախու, յափու։

Բառամիջում յ-ն հանգես է գալիս իբրև ձայնակապ, ինչպես՝ իլլայի (մանավանդ), յայլա (յայլադ), կային, խաղային, իսկ բառավերջում հանգես է գալիս մի քանի միավանկ բառերում՝ հատկապես ձայնարկությունների մեջ՝ հայ, այ, հայ, հէյ և այլն։

Ն

124. Բառասկզբում հնչվում է ն. ինչպես՝ նեղանալ-նէղնալ, նոր-նօր, նաւթ-նափթ, նուռն-նուռ, նստել-նըստէլ։

Նմանիլ ձեի դիմաց բարբառս ունի գըլմանի(1), ուր ն-ն մ-ի տարնմանությամբ հնչյունափոխվել է լի։

Բառամիջում հիմնականում մնում է անփոփոխ։ օրինակ՝ մանել-մանէլ, գանգատ-գանգատ, մատանի-մագնիք, բացի այն դեպքից, երբ իրեն հաջորդող շրթնային բ-ի մոտ (այդ մոտիկությանը առաջացած լինի բնական, թե՛ ձայնափոփի սղման պատճառով՝ միենույն է) հնչյունափոխվում է մ-ի, ինչպես՝ անապակամբագ, անբախտ-ամբախտ, ճանապահն-ճամբահ։

Իրեն հաջորդող կատկայինի հետ ն-ն ենթարկվում է երկու տեսակ հնչյունափոխության՝ նախ կատկայինը դառնում է յ, իսկ ն-ն ընկնում է, երկրորդ՝ կատկայինը պահպանվում է, ն-ն դարձյալ ընկնում է, երկու դեպքերի համար էլ ունենք մեկական օրինակ։ կանգնիլ-կայնէլ, ցնկնել-ցըգնէլ։

125. Բառավերջում հնչվում է ն. ինչպես՝ բան-բան, բերան-բերան, տուն-տուն, շուն-շուն։

Այն բոլոր բառերը, որոնք գրաբարում ունեն վերջահանգն, բարբառում հանգես են գալիս առանց ն-ի. օրինակ՝ ծունգն-ծունգ, մուկն-մուգ, թիթեռն-թիթէո, գառն-գառ և այլն։

126. Բառասկզբում, երբ ուին հաջորդում են ու, է, օ ձայնավորները, ուն ստանում է յ հենարանը, ինչպես՝ ոեհան-յոէան, ոռւմբ-յոռմբ, ոռմիկ-յոօմիգ, ոեխ-յոէխ, բայց և կարող է չըստանալ, ինչպես՝ ոէան, ոօմիգ:

Բառամիջում և վերջում ևս հնչվում է ո, ինչպես՝ կոիւկըոիվ, առաւօտուն-յառդուն, խոռվել-խըռօվէլ, պառավ-պառավ, աստառ-աստառ, ծառ-ծառ, ախոռ-ախոռ:

Բարբառումս ունի ունի գործողության սաստկացնողի կիրառություն, ինչպես՝ ճանգել-ճանգոէլ, ժանգոտել-ժանգոտէլ:

Ը

127. Բարբառս թով սկսվող բառ չունի:

Բառամիջում սովորաբար ննում է անփոփոխ, ինչպես՝ երազէրած, արեւ-արէվ, բարակ-քարագ, կարմիր-կարմիր, բացի հետեւյալ դեպքերից՝ ա) ատամնային դ (թ) և սուլական ձ հնչյուններին հաջորդող թ-ն հնչվում է ո, ինչպես՝ դադ(ա)րել-դաթոէլ, ընտրել-ընդոէլ, մանր-մանդըռ, ծանր-ծանդըռ, բարձր-բանձըռ. բ) Մի քանի բառերում զ, ծ հնչյուններից առաջ թ-ի փոխարեն բարբառս ունի ո, ինչպես արջ-առջ, կրծել-կրոձէլ, մրջիւն-մըռջուն:

Սանորություն 1.—Ատամնային դ, տ, թ հնչյուններից առաջ գտընվող թող թ-ն ենթարկվում է հետեւյալ հնչյունափոխություններին.

Թդ> բթ ինչպես՝ արդար-յարթար, վարդ-վարթ, զարդ-զարթ, որդի-վօրթի, ժողովուրդ-ժօղովուրթ:

Այս օրենքից բացառություն է կազմում դարդ բառը իր ածանցալոր ձեւերով՝ դարդուր-դարդող:

Թտ> բդ, ինչպես՝ աշակերտ-յաշկէրդ, վարտիք-վարդիք, քրտինք-քըրդինք, արտասուք-յարդըսունք, սիրտ-սիրդ, որտեղ-յուրէղ, դատարկ-դարդագ:

Թթ> բթ ինչպես (զ)արթուն-զարթուն, երթալ-էրթալ, հորթ-ֆօրթ, քերթել-քէրթէլ, շուրթն-շուրթ, խորթ-խորթ:

128. Ուն բառավերջում նույնպես ննում է անփոփոխ, ինչպես՝ այսօր-ասօր, էսօր, աղբիւր-ախպուր, հազար-հազար, գիշեր-քըշէր:

Բայց կան մի քանի բառեր, որոնց վերջում ունենք ո,

գրանք են՝ ոսկր-օսկոռ, ոսկրոտ-օսկրոօլ, մարմար-մարմառ, ձաւ-գար-ձաքառ:

Սանորույթուն 1. — Կրկնությամբ կազմված բառերում ք-ն հնչվում է ո, օրինակ՝ թրթուռ-թրթուռ, փրփուր-փրփուռ, սարչ սուալ-սուսըռալ, թրթուալ-թրթըռալ:

Սանորույթուն 2. — Բ-ի անկման գեպքեր նկատվում են առաջնայեղ-վային ծ, շ, ս բաղաձայններից առաջ, ինչպես՝ արժել-ամէ(լ), գոլորշի-գոլոշի, գուրս-գուս (տե՛ս § 129):

Դ. Ա Ն Կ Ո Ւ Մ

129. «Զայնավորների փոփոխություններ» բաժնում խոսելով յուրաքանչյուր ձայնավորի մասին նկատեցինք նաև նրանց անկման գեպքերը: Բաղաձայնների անկման մասին հիշատակվեց կողմնակիորեն՝ նրանց փոփոխությունների մասին խոսելիս: Ամփոփելով և ի մի բերելով բարբառիս բաղաձայնների անկման բոլոր գեպքերը, ստանում ենք հետեւյալ պատկերը.

1. Ը ձայնորդն ընկնում է՝

ա) ծ, շ, ս շփականներից առաջ. եղած օրինակներն են՝ տրժան-աժան, չժան, շարժել-ժաժէլ, վարժապետ-վաժարէդ, տարժանելի-տաժանէլի, գոլորշի-գոլոշի, խարշել-խաշէլ, քարշել-քաշէլ, խարշ-խաշ, ներս-նէս, գուրս-գուս, մըսել-մըսէլ, մըսկան-մսկան, որսկան-վոսկան, չորսդին-չօսթին, Վաղարշակ-Վաղաշագ:

բ) Պ, Փ պայթականներից առաջ՝ երբ-յէփ, երբոր-յէփօր, զրպարտել-զըբարդէլ:

գ) Զ, Չ շշականներից առաջ՝ բաղարջ-բաղաջ, արջառ-աշառ:

դ) Հ կոկորդայինից առաջ՝ շնորհաւոր-շընավօր:

ե) Ծ սուլականից առաջ և Չ շշականից հետո, որոնց համար ունենք մեկական օրինակ՝ կրծկալ-կրծգալ, ջրաղաց-ջաղաց (նաև ջաղաչք):

2. Դ-ն բաղաձայնների խճողման պատճառով ընկնում է խղճմանք-խըճմըդանք բառում:

3. Հ-ն ընկնում է՝

ա) Բառամիջում և բառավերջում ք-ից հետո. եղած օրինակներն են՝ շնօրհակալ-շնօրագալ, արհեստաւոր-արէստավօր, արհամարհել-արամարէլ, Միհրան-Միրան, շնորհք-շընօրք, խորհուրդ-խօրուրթ, աշխարհ-աշխար, շնորհաւոր-շընօրագօր (նաև շընավօր):

բ) Բարդ և ածանցավոր բառերում, որոնց առաջին մասը զերջանում է բաղաձայնով, իսկ երկրորդ մասը սկսվում է նախաձայն հող՝ անհամբեր-անամբէր, անհարմար-անարմար, ջըր-հեղեղ-ջըրէղէր, մեկ հատ-մէտքըմ (տե՛ս § 120):

4. Ն-ն ընկնում է կատկային կ>գ-ից առաջ՝ կանգնել-կայնէլ, ցնկնել-ցըգնէլ, արմունկ-արմուգ, վերջահանդ ն-ի մասին տե՛ս § 125:

5. Տ-ն ընկնում է, երբ գտնվում է երկու բաղաձայնների միջև՝ պաշտպան-պաշպան, աստղանի-ասիսանի, աստված-ասված, Աստղիկ-Ասիսիկ: Բացառությունների մասին տես § 90:

6. Ս-ն ընկնում է կ, ք կատկայիններից առաջ, եղած օրինակներն են՝ սկեսուր-կէսուր, սկեսրայր-կէրսար, սքանչեցնել-քանչացըներ, քանչէցընէլ:

7. ♫, ին բաղաձայնների անկման մասին խոսվել է §§ 68, 116-ում:

Ե. Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ

130. Զայնավորների հավելում, որը մեծ մասամբ հետեւ վանք է ներդաշնակության՝ բաղաձայնների ավելի թեթև հընչման պահանջի, բարբառումս գոյություն չունի, եթե նկատի չունենանք գաղտնավանկերի ըն, որը կարնո բարբառում հընչվում է ավելի ուժեղ, քան արդի հայերենում:

Բաղաձայնների հավելումով և հարուստ չէ բարբառու:

Ավելանում են հետեւյալ բաղաձայնները:

1. Բարբառիս բնորոշ ձայնեղ յ-ն, որն ավելանում է մեծ մասամբ բառասկզբում՝ ձայնավորներից առաջ և բառամիջում՝ բառաբարգման գեպքում, երբ բարդության երկրորդ բաղադրիչը սկսվում է յ-ով. ինչպես՝ ակն-յագ, արծաթ-յարձաթ, արդար-յարթար, անյարթար, արիւն-յարուն, անյարուն, ետի-յէգի, ետ-յեղ, երգիկ-յէրթիդ, երեք-յիրէք, ուրիշ-յուրիշ:

յ-ի ավելացում ունենք նաև բաղաձայններից առաջ՝ ուղեղ-յլուզ, ուկի-յուէի, զգալ-յզգալ:

2. Ն ոնդայինն ավելանում է՝

ա) Բառի վերջում, որոշիչ հոգի անալոգիայով՝ դու-դուն, երեկոյ-յիրիկուն (նաև յիրգուն):

բ) Բառամիջում նախահանդ ոնդականի (մ կամ ն) ազգեցությամբ՝ ձայնավորի և բաղաձայնի միջև՝ ամաչել-ամընչէլ, (նաև ամչընալ), կամուրջ-կարմունջ, մեծ-մէնձ, կանաչ-կանանչ,

մեք-մէնք, զոքանչ-զօնքաչ-զօնքանչ, բանալիք-քաննլիք-քալ-լիք, ականջ-յանգաջ-յանգանջ:

գ) Բառամիջում ավելանում է նաև արտասուք-յարդըսունք, ավելորդ-էվէլնօրիթ բառերում:

3. Գաղտնավանկ ունեցող միավանկ բառերի նր խմբի մեջ ավելանում է դ ատամնայինը, ինչպես՝ ծանր-ծանդըս, սանր-սանդըս, մանր-մանդըս, ծունր-ծունդըս, (ը>ռ-ի մասին տե՛ս § 127):

Դ-ի ավելացման այս երեսոյթը առաջին անգամ նկատել է Միք. Նալբանդյանը. Նկատի ունենալով գաղտնավանկի թույլ ք-ն, Մ. Նալբանդյանը այդպիսի բառերի մեջ տեսել է մեկ ու կես վանկ: Նրա կարծիքով մեկ ու կես վանկ արտասանելը դըժվար է եղել, և ժողովուրդը այդ գժվարությունից խուսափելու համար ավելացրել է տ (բարբառումս դ) բաղաձայնը՝ նման բառերը վերածելով երկվանկ ձևերի:

4. Հ-ի հավելում նկատում ենք բառասկզբում՝ ձայնավորից առաջ, ալեւոր-հալէվօր, ազանիլ-հաքնէլ, արբենալ-հարփէլ, ուլունք-հրլուն:

5. Յ շրթնայինն ավելանում է բառամիջում, մը խմբի մեջ, ինչպես՝ համբանք-համբռանք, թմրել-դըմբռէլ, բառավերջում՝ մայնորդից հետո՝ բեմ-թէմբ:

6. Լ ձայնորդը ավելանում է բառամիջում՝ բաղաձայնի և ձայնավորի միջի, բառին տալով փաղաքշական իմաստ. ինչպես՝ ցածիկ-ցածլիդ, խածան (կծոն). խածլան, խածան-խարլան, հաստ-հաստիդ:

7. Կ-ն ավելանում է բառասկզբում, որի միակ օրինակն է՝ եռալ-կէռալ (քոր գալ):

Զ. ԴՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

131. Ամենից շատ տեղափոխվում է ք բաղաձայնը, ինչպես՝ ծոծրակ-ծօրձագ, կապերտ-կարբէդ, դատարկ-դարդագ, կամուրջ-կարմունջ, սկեսրայր-կէրսար, սովորել-սօրվէլ, մեղր-մերդ, տոպ-բակ-տօրբագ, անձրեւ-յանձրվէր, փշրանք-փերբանք, դատարկել-գարդրգէլ, կճրտացնել-կըռջըդացնէլ, Մեսրոլ-Մէրսօր:

132. Ն բաղաձայնը տեղափոխվում է հետեւյալ բառերում՝ թալանել-թանլէլ, ականջ-յանգանջ, շինք-շընլիք, բանալի-քալ-նիք, զոքանչ-զօնքանչ-զօնքաչ, անալի-անլի, ալնի, կնծիռն-կըռինջ:

133. Խ բաղաձայնի տեղափոխման գեղքերն են.

ոչխար-օխչար, բաշխել-թախշէլ (տալով իմաստի տարրերակում), նաշխախախշ, աշխատանք-ախշատանք, խստոր-սըխտոր, նաշխուն-նըխուն, աշխարհ-ախշար, թաթախել-թաթխել-թախտէլ.

134. Մյուս բաղաձայնների տեղափոխման համար ունենք հետեւյալ օրինակները.

լդ>ղլ հարդա (օղակ)-հաղլա, տալզա (ալիք)-տաղլա:

լվ>վլ լվացք-վլացք, գոլվաթ-գովլաթ կամ հակառակը՝ աւել-լել-ավլէլ, ալվէլ.

պլ>լբ պլոկել-լբօգէլ

խլ>լխ ֆխլել-ֆըլխէլ

մլ>լմ տամլա-տալմա

կլ>լգ ծկլատել-ծըլգագէլ

զց>ցք գցել-ցըքէլ

կո>ոզ ակոա-շառզա

փտ>քբ փետուր-թէրուր (Ախց.).

135. Եզրային հնչյունների դրափոխության օրինակներ են՝ շարք-ֆառշ, կճեպ-կըբէճ, կճեպել-կըբճէլ, սարդոստայնիկ-սալանդօստիկ.

Ե. Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն

136. Բաղաձայնների կըկնություն, որն առաջ է բերում իմաստի սաստկացում, բարբառումս քիչ ենք հանդիպում, եթե նկատի չունենանք բնաձայնական բառերի բաղաձայնների կըրկնությունը. եղած օրինակներն են՝ մենակ-մէննագ, ամեն-ամմէն.

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

137. Զայնեղ պայթականները բառասկզբում, առանց բառության, արտասանվում են ձայնեղ շնչեղ: Բառամիջում և վերջում թ, ծ ձայնեղները պահպանում են իրենց ձայնեղությունը և խուլ շնչեղի վերածվում թ ձայնորդին հաջորդելիս ժիայն, իսկ զ, դ, շ-ն վեր են ածվում խուլ շնչեղների և վերականգնում իրենց ձայնեղությունը՝ ն ոնդայինին հաջորդելիս ժիայն: Զայնեղ պայթականի խլացման մի դեպք ունենք, երբ բ-ին նախորդում է խ բաղաձայնը:

138. Խուլ պայթականները բառասկզբում հնչվում են խուլ, բառամիջում և վերջում ձայնեղանում են ձայնորդներից հետո և խլանում՝ խուլ շփականներից հետո:

139. Խուլ շնչեղ պայթականները, ձայնորդները, ձայնեղ ու

խուլ շփականները հիմնականում մնում են անփոփոխ, բացառությամբ վ, ճ, թ բաղաձայնների, որոնց մասնակի փոփոխությունների մասին խոսեցինք համապատասխան տեղում (§§ 109, 118, 127):

140. Բարբառիս ևս հատուկ են ընդհանրական հնչյունափոխությունները իրենց բոլոր գրակորումներով՝ հնչյունների անկում, հավելում, դրափոխություն, առնմանում և տարնմանում:

ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՅԱԿԱՆ

Ա. ՀՈԳՆԱԿԻՒ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

141. Կարնո բարբառում հոգնակին կազմվում է՝ էր, նէր, էստան-ստան, ք, իք, դիք, վրդիք, վի, վրնէր, անք, դանք, աննէր, էնք, օնք մասնիկներով:

142. Գոյականների մեծ մասը ստանում են էր, նէր հոգնակիները: Միավանկ բառերը ստանում են էր, բազմավանկ բառերը՝ նէր, ինչպես՝ հավ-հավէր, քող-քողէր, թուշ-թուշէր, կուժ-կոժէր, կող-կողէր, լուշ-լուշէր, ախշիգ-ախշրգնէր, խընձօր-խընձորնէր, հալափ-հալափնէր,, կագու-կագվիճնէր:

Այն միավանկ բառերը, որոնք գրաբարում ունեցել են արմատական վերջահանգ ն, հոգնակիում ունեն նէր, ինչպես՝ մուկն մուգ-մըգնէր, հարսն-հարս-հարսնէր, գուսն-կուս-կըսնէր, թոռն-թոռ-թոռնէր, լեառն-լէռ-լէռնէր, մատն-մագ-մագնէր: Բայց և կան այնպիսինները, որոնք ստանում են էր, ինչպես՝ ուլն-ուլ-ուլէր, կաթն-կաթ-կաթնէր: Մի քանի միավանկ բառեր անալոգիայով ստանում են նէր հոգնակին, ինչպես՝ ծառ-ծառնէր:

143. Մեկ ու կես վանկանի բառերը ստանում են նէր, ինչպես՝ սանր-սանդըս-սանդըսնէր, մանդըս-մանդըսնէր, տէքըր-տէքըրնէր (նաև տէքըրդիք): Այս կանոնից բացառություն է կազմում աստղ-ասխ-ասխէր:

144. Դրաբարում ք հոգնակի ունեցող բառերը Կարնո բարբառում չեն գիտակցվում իբրև հոգնակի և նորից ստանում են պահանջված էր կամ նէր մասնիկները, ինչպես՝ ոտք-վօդքէր, պարտք-պարտքէր, արտասուք-յարդըսունքնէր, բամբասանք-քամբասանքնէր:

145. Այն բազմավանկ բառերը, որոնք եզակիում ունեն

վերջահանգ Յ, հոգնակիում պահպանում են իրենց ն-ն և ստանալով ներ մասնիկը ունենում են երկու Յ, ինչպես՝ յէրգան-յէրգիննէր, յիրգուն-յիրգըննէր, շամդան-շամդըննէր, մէնձութէն-ժէնձութէննէր:

146. ԱՅ, շ նախածանցներով բարդված միավանկ բառերը, նաև այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ է, իրեւ բազմավանկ բառեր ստանում են միշտ ներ մասնիկը. ինչպես՝ անսիրդ-անսիրդնէրը, անտէր-յանդէր-յանդէրնէրը, չտէս-չտէսնէրը, հօքուր-հօքուրնէրը, էսպէս-էսպէսնէրը, սանամէր-սանամէրնէրը, սանահար-սանահարնէրը, անէրցաք-անէրցաքնէրը:

147. Ստան կամ էստան հոգնակի մասնիկն են ստանում մեծ մասամբ այն բառերը, որոնք ունեն ի, իք վերջավլորությունը, ինչպես՝ գարշէլի-գարշէլէստան, գարիք-գարիքէստան (գարիննէր), հոգիք-հօքէստան (հոգիննէր), տարիք-տարիքէստան (տարիննէր), գարդիք-գարդէստան (գարտիքնէր), երդիք-յէրթէստան (երդիքնէր), բաղանիք-քաղնէստան (բաղնիքնէր), բանալիք-քալ-նէստան (բանալիքնէր), բայց նաև փէսար-փէսէստան (փէսաննէր), փարտ-փարէստան (փրամնէր), հարս-հարսնէստան (հարսննէր), գուլրա-գուլրէստան (գուլպաննէր):

Էստան հոգնակի մասնիկն են ստանում նաև մի շարք փոխառյալ բառեր, ինչպես՝ բոռ-քոռէստան (վառարանի խողովակնէր), սըրա-սըրէստան (հըրթնէր), շիշա-շիշէստան (ապակիննէր), մալ-մալէստան (անսաուննէր): Այժմ էստան մասնիկի հոգնակի նշանակությունը շատ գեղքերում մթագնվում է, և բառը ստանում է նորից ներ, երբեմն նաև ք հոգնակին. օրինակ՝ քալ-նէստաննէր, քաղնէստաննէր, գարշէլէստանք:

148. Գրաբարյան ք հոգնակին բարբառս պահպանում է ի-ով և ա-ով վերջացող բազմավանկ բառերում՝ գինի-գինիք, հայլի-հայլիք, ածիլի-ածըլիք, խընամի-խընամիք, օսկի-օսկիքը, թզենի-թըզի-թըզիք, տպայ-տրդա-տըզաք, տըզէք, երեխայ-էրէխա-էրէխիք, քալա-քալէք, թուլա-թուլէք, ինչպես նաև ացի, եցի, ցի՝ որտեղացի լինելը ցույց տվող ածանցներով կազմված բառերում, ինչպես՝ գէղացի-գէղացիք, քաղքըցի-քաղքըցիք, դարսէցի-դարս(է)ցիք, պօլսէցի-պոլսէցիք և այլն:

Ք հոգնակի ստացող գոյականները հոգնակի սեռականում ստանում են օց, ինչպես գինօց, հայլօց, ածիլօց, խընամօց, (նաև խնամօնց), օսկօց, թըզօց, տըզօց, էրէխօց, քալօց, թուլօց, գէղա-

ցօց, քաղքըցօց (նաև քաղքըցօնց), դարս(է)ցօց, պօլուեցօց (նաև պօլուեցօնց):

149. Իք, դիք, վըդիք մասնիկներն են ստանում հետեւյալ գոյականները. աման-ամնիք, մարթ-մարթիք, կընիգմարթ-կընիգմարթիք, ախար-ախպէր-ախպարդիք-ախպըրդիք, կընիգ-կընգդիք, խընամի-խընամդիք, տէքր-տէքըրդիք-տէր-տիրվըրդիք (նաև տիրվըրանք), քուր-քուրվըդիք, տալ-տալվըդիք:

Սբանք նույնպես հոգնակի սեռականում ստանում են օց, ինչպես՝ ամիօց, մարթօց, ախպըրդօց, կընգդօց, խընամդօց, տէքըրդօց, քուրվըրդօց, ախպըրդօց:

150. Վի, վըներ մասնիկները գործ են ածվում Ախալցի-խեռում և Ախալքալաքիում: Մեծ մասամբ այդ մասնիկները ստանում են մարմնի զույգ անդամները ցույց տվող բառերը, ինչպես՝ զօդ-զօդվի, զօդվընէր, ձէռք-ձէռվի, ձէռվընէր, ունք-ունքվի-ունքվընէր, ծունդ-ծունդվի-ծունդվընէր, մադ-մադվի-մադվընէր յաշք-յաշչվի-յաշչվընէր:

151. Անք, դանք, աննէր մասնիկները շատ սակավ են գործածվում. եղած օրինակներն են՝ էշ-իշանք, իշաննէր, ձի-ձիանք, ձիաննէր, կաքավ-կաքվունանք, յագն-յագնունանք (թանկագին քարեր), հավք-հավքունանք (հավքեր), օսկոռ-օսկոռդանք, յընգէր-յընգէրդանք, ախպէր-ախպէրդանք, կըդօր-կըդօրդանք, փըշօրդանք:

Անք մասնիկը ավելի շատ է կիրառվում հավաքական իմաստ տրտահայտելու համար, ինչպես՝ քէռի-քէռանք, մօրքուր-մօրքուրտնք, անէր-անէրանք, քափօր-քափօրանք և այլն.

152. Էնք, օնք մասնիկները ավելի շատ հավաքական իմաստ են արտահայտում, ինչպես՝ պար-պարօնք, Մըգօյէնք, Մարդօյէնք, Ավգըլէնք և այլն. Օնք մասնիկով իրենց հոգնակին են կազմում նաև մի շարք գերանուններ, ինչպես՝ ագօնք, իգօնք, ձէրօնք, իսօնք, իմօնք, անօնք, իսօնք և այլն:

Բ. ՀՈԼՈՎՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

153. Կարնո բարբառը կը ճյուղի մյուս բարբառների նման ունի և հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական: Ներգոյական գաղափարը արտահայտվում է սեռական+մեջ հետագությամբ և հայցականով:

Ուղղական հոլովը գործածվում է նաև իբրև կոչական: Սեռականը ստանում է և հոգը, որով և (բացի զերանուններից)

ձեռք նմանվում է տրականին: Իր ցույց տվող դոյականների հայցականը ձեռվ նման է ուղղականին, իսկ անձ ցույց տվող՝ ներինը՝ տրականին: Հայցականը գործածվում է ոչ միայն իբրև նախդրիվ հայցական՝ շարժման ուղղությունը ցույց տալու համար, այլև իբրև բուն ներգոյական. օրինակ՝ յառավող կանոփ կերպար բաղնիք: Քըշերները բ'ազի զուսը կը քընիք: Բացառականը թե եղակիում, թե հոգնակիում կազմվում է էնէցէն (քաղքէն, փէսէցէն) մասնիկներով, գործիականը՝ օվ մասնիկով. Գոյականների թեքումը սկսվում է եղակի սեռականից:

Բարբառոս ունի յոթը հոլովիչ (ի, ու, օզ, օր, վա, ան, ց), որոնք և կազմում են եղակի սեռականի հոլովական վերջավորությունները, որոնք և յոթը հոլովում: Հոգնակի թվում գոյականների ճնշող մեծամասնությունը ենթարկվում է ու հոլովման:

Գ. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Խ

154. Կարսո բարբառում հոլովումը կատարվում է գերազանցապես կցական սիստեմով՝ եղակի թվում հոլովական վերջավորությունները կցվում են անմիջապես բառարմատին, հոգնակի թվում՝ բառի հիմքի վրա ավելացած հոգնակի մասնիկներին: Հոլովամբը պարզ է ու կանոնավոր: Արոշյալ առումով հոլովելիս դոյականները ստանում են ը հոգը:

Ա.Ա.ԶԻՒ ՀԱԼՈՎԱԽՄ

155. Բարբառիս ամենատարածված և ամենագործուն հոլովամն է: Այս հոլովմանն են պատկանում այն բոլոր բառերը, որոնք եղակի սեռականում ստանում են ի: Բարբառիս բառերի ամենամեծ մասը ենթարկվում են այս հոլովման: Հոլովական վերջավորություններն են՝ սեռ. ի, ար. ին, հայց. իրի առման դեպքում նման է ուղղականին, անձի առման դեպքում՝ տրականին, բացառ. ին, գործ. օվ: Հոգնակի սեռ. և տր. էրու կամ նէրու, բաց. էրէն, նէրէն, գործ. էրօվ, նէրօվ: Օրինակ՝

Եղակի

- Ա.գգ. ծօվ(ը) պառավ(ը)
- Սեռ. ծօվի(ն) պառվի(ն)
- Տը. ծօվի(ն) պառվի(ն)
- Հայց. ծօվ(ը) պառվի(ն)
- Բաց. ծօվէն պառվէն
- Գործ. ծօվօվ պառվօվ

Հոգնակի

- ծօվէր(ը) պառվընէր(ը)
- ծօվէրու(ն) պառվընէրու(ն)
- ծօվէրու(ն) պառվընէրու(ն)
- ծօվէր(ը) պառվընէրու(ն)
- ծօվէրէն պառվընէրէն
- ծօվէրօվ պառվընէրօվ

156. Այս հոլովմանն են ենթարկվում նույնիսկ մյուս հոլովմաններին պատկանող շատ գոյականներ (էշ-իշու նաև իշի, շաբաթ-շաբթըզա նաև շաբթի), օտար փոխառությունների մեծ մասը (զավաշ-զավալի, գուշման-գուշմընի), օտար մասնիկներով ածանցված կամ բարդված հայերեն շատ բառեր (ձընթօփ-ձընթօփի, մարթասըգ-մարթասըզի, քեմուրադգ-քէմուրադի), ենթակայական գերբարյ՝ իրբե փոխանուն հոլովմելիս (խրմօդ-խրմօղի), վերջապես գրաբարում վերջահանգ և ունեցող միավանի բառերի մեծ մասը (ձուգ-ձըգի, թօու-թոոի), որոնք հոգնակի թվում պահպանում են հիմքի ն-ն և ունենում են կազմում՝ սէրմսէրմէր, նուռնըռուէր, մաս-մասէր, ուլ-ուլէր, կաթ-կաթէր:

157. Առաջին հոլովման պատկանող այն բառերը, որոնք ուղղականում ունեն ու, սեռականում ստանում են վ, ինչպես՝ լուլպի, լիզու-լիզզի, կադու-կադզի:

Ուղղականում ա-ով վերջացող բառերը եզակի սեռականում կորցնում են ա-ն, հոգնակի ուղղ. ստանում ք, սեռ.՝ օց, բաց. օցէն, գործ. օցօվ: *Օրինակ՝*

Տըղա, տըղի, տըղէք, տըղօց, տըղօցէն, տըղէքօվ (կամ տըղօցօվ). փէսա, փէսի, փէսէք, փէսօց, փէսօցէն, փէսէքօվ (կամ փէսօցօվ). թուլա, թուլի, թուլէք, թուլօց, թուլօցէն, թուլէքօվ (կամ թուլօցօվ). բալա, բալի, բալէք, բալօց, բալօցէն, բալէքօվ (կամ բալօցօվ):

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՄԱՆ

158. Երկրորդ հոլովման պատկանում են բոլոր այն գոյականները և գոյականաբար գործածվող մյուս բառերը, որոնք եզակի սեռականում ստանում են ու: Այդպիսի բառերի մեծ մասը ուղղականում վերջավորվում են ի և ին:

Այս հոլովման վերջավորությունները հոգնակի թվում նույն են, ինչոր առաջին հոլովման նույն թվի վերջավորությունները: Եզակի թվում սեռ. և տր. ունեն ու, բաց. էն, էցէն գործ. օվ վերջավորությունները: Իրբե ընդհանուր կանոն այս հոլովման պատկանող բոլոր բառերի ուղղականի վերջահանգ ի ձայնավորը գուրս է ընկնում եզակի թվի հոլովմերում: Այս կանոնից բացառություն է կազմում ձի միավանկ բառը, որը պահպանում է ին և ստանում համապատասխան վերջավորությունները: *Օրինակ՝*

Ե Կ Ա Կ Ի

Հ Ա Գ Ա Կ Ի

| | | | |
|---------------|----------|--------------|----------------|
| Թւղթ. գինի(ն) | ձի(ն) | գինինէր(ը) | ձ'իէր(ը) ձիանք |
| Սեռ. գինու(ն) | ձիու(ն) | գինինէրու(ն) | ձիէրու(ն) |
| Տը. գինու(ն) | ձիու(ն) | գինինէրու(ն) | ձիէրու(ն) |
| Հայց. գինի(ն) | ձ'իու(ն) | գինինէր(ը) | ձիէրու(ն) |
| Բաց. գինէցէն | ձ'իէն | գինինէրէն | ձիէրէն |
| Գործ. գինօվ | ձ'իօվ | գինինէրօվ | ձիէրօվ |

159. Ուզգականում՝ ի-ով վերջացող գոյականները հոգնակի թվում ստանում են նաև ք և ենթարկվում կրկնածե՛ գլաբարախառն հոլովման, ստանալով օց (սեռ., տր.), օցէն (բաց.), օվ (գործ.) վերջավորությունները. ինչպես՝ գինիք-գինօց-գինօցէն-գինիքօվ, հայլիք-հայլօց-հայլօցէն-հայլիքով:

160. Երկրորդ հոլովմանն են ենթարկվում նաև՝ ա) բոլոր անորոշ դերայները իրեւ փոխանուն հոլովվելիս, օրինակ՝ սիրելու, խընդալու, էրթըլու, բ) ացի, եցի, ցի ածանցով կաղմը-ված բառերը, որոնք հոգնակիում ստանալով ք՝ հոլովվում են կրկնածե հոլովմամբ (գյումրէցիք, գյումրէցօց, գյումրէցօցէն), գ) այն փոխառյալ բառերը, որոնք ունեն ի վերջավորությունը կամ բարդված են՝ զբաղմունք, արհեստ ցույց տվող նի ածանցով, ինչպես՝ ուստարաշի, ուստարաշու, գամբըճի-գամբըճու (գարբին), չըսփի-չըսփու (որմնագիրների լարը), դ) ուզգականում ի չունեցող մի քանի գոյականներ՝ մարթ, կընիգմորթ, ձամբա, որոնց հոգնակին լինում է մարթիք, կընիգմարթիք, ձամբէք (մյուս հոլովմերը § 159 նման) նաև մանչ, գըլօխ, ամիս, սէր, էշ, ասված բառերը, որոնցից տռաջին երեքը հոլովվում են կանոնավոր, իսկ վերջին երեքը հետեւյալ առանձնահատկություններով.

Ուզգ. սէր, սեռ. սիրու, բաց. սէրէն, հոգնակիում չի գործածվում
» էշ » իշու հոգն. ուզգ. էշէր նաև իշանք, սեռ. իշէրու(ն)
» ասված » ասծու կամ աստծու, բաց. աստրծմէն կամ աստ-
արծէն:

ԵՐՐՈՐԴԻ ՀՈԼՈՎՄԱՒ

161. Այս հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր, որոնք սեռականում ստանում են օց հոլովիչը և այն պահպանում եզակի թվի բոլոր թեք հոլովմերում: Մյուս հոլովմերը թե եզակիում, թե հոգնակիում ստանում են իրենց հիմնական վերջավորությունները. օրինակ՝

Ե զ ա կ ի

| | |
|--------------------------|-------------------------|
| Աւղ. քուր(ը) | քուրէր(ը) նաև քուրվըգիք |
| Մեռ. քըրօջ(ը), քուրօջ(ը) | քուրէրու(ն) քուրվըգօց |
| Տր. քըրօջ(ը) | քուրէրու(ն) քուրվըգօց |
| Հայց. քըրօջ(ը) | քուրէրու(ն) քուրվըգօց |
| Բաց. քըրօջէն | քուրէրէն քուրվըգօցէն |
| Գործ. քըրօջօվ | քուրէրօվ քուրվըգիքօվ |

162. Երրորդ հոլովմանն են պատկանում ազգակցություն ցույց տվող հետեւյալ բառերը՝ քուր, կէսուր, տաքըր (նաև տէքըր), տալ, նաև՝ տէր, յընդէր, Բայց այն բարդ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը կազմվում է քուր կամ տէր բառերով (մօրքուր, տէքտէր և այլն), ենթարկվում են ոչ թե այս հոլովման, այլ՝ առաջին:

163. Ոչ հոլովման պատկանող բառերը հագնակիում ստանալով դիք, վրդիք հոգնակիները, սեռականում լինում են քուրվըգօց, տէրվըգօց, յընդէրդօց, այսինքն ենթարկվում են գրաբարախառն հոլովման:

ԶՈՐՅՈՒԹԻՒՆ

164. Այս հոլովման են ենթարկվում գարձյալ ազգակցություն արտահայտող սակագաթիվ բառեր՝ ախալէր (ախալար), հէր (հար), մէր (մար), նաև այն բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչն են հանգիստանում այս նույն բառերը, ինչպես՝ ծըծմէր, մէնձախալէր նաև մէնձախալար:

Չորրորդ հոլովման բնորոշ հատկանիշն է սեռականի օր հոլովիչը, որը պահպանվում է եղակի թվի բոլոր թեք հոլովներում: Հոգնակի թվում միայն ախալէր գոյականը կարող է ստանալ նաև դիք հոգնակին և հոլովվել երկրորդ ձեռվ՝ գրաբարախառն:

Ե զ ա կ ի

| | |
|-----------------|-------------------------------|
| Աւղ. ախալէր(ը) | ախալէրնէր(ը) կամ ախալըրդիք(ը) |
| Մեռ. ախալօր(ը) | ախալէրնէրու(ն) ախալըրդօց(ը) |
| Տր. ախալօր(ը) | ախալէրնէրու(ն) ախալըրդօց(ը) |
| Հայց. ախալօր(ը) | ախալէրնէրու(ն) ախալըրդօց(ը) |
| Բաց. ախալօրէն | ախալէրնէրէն ախալըրդօցէն |
| Գործ. ախալօրօվ | ախալէրնէրօվ ախալըրդօցօվ |

Հ ո գ ն ա կ ի

ՀԵՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

165. Այս հոլովման առանձնահատկությունն այն է, որ սեռականում ունի վահովիչը, որը, սակայն, բացառական և գործիական հոլովմերում հաճախ ընկնում է: Հինգերորդ հոլովմանն են ենթարկվում՝ ժամանակ ցույց տվող համարյա բոլոր բառերը՝ տարի, ցէրէգ, յիր(ի)գուն, ամիս, յէրէգ, հէրու, յառագօդ, կիրագի, ձըմէռ և այլն, նույնիսկ ժամանակ արտահայտող փոխառյալ բառերը, ինչպես՝ սա(հ)աթ-սա(հ)աթվա (ժամ), մինուգ-մինուգվա: Այս հոլովման հոգնակի թիվը կազմվում է շատ կանոնավոր՝ հիմքի վրա ավելանում են հոլովական համապատասխան վերջավորությունները. օրինակ՝

| Ե գ ա կ ի | Հ ո գ ն ա կ ի |
|------------------|----------------------|
| Ուղղ. տարի(ն) | տարինէր(ը) |
| Սեռ. տարվա(ն) | տարինէրու(ն) |
| Տը. տարվա(ն) | տարինէրու(ն) |
| Հայց. տարի | տարինէր(ը) |
| Բաց. տարվանէն | տարինէրէն |
| Գործ. տար(վան)օվ | տարինէրօվ |

166. Ամսվա և շաբաթվա անունները ենթարկվում են առաջին և երկրորդ հոլովման, մինչդեռ կէս բառը, իրրե երկրորդ բաղադրիչ հանգես գալով ժամանակ արտահայտող անունների հետ, ենթարկվում է վահովման, ինչպես՝ սա(հ)աթուկէս-սա-(հ)աթուկէսվա, օրուկէս-օրուկէսվա:

Վահովմանն է ենթարկվում նաև մահ բառը:

ԳԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

167. Այս հոլովման պատկանող բառերը սեռականում ստանում են ան հոլովիչը, գրանք ուղղականում ունենում են ուն վերջավորությունը, ինչպես՝ շուն, տուն, Այս հոլովմանն են ենթարկվում նաև գրաբարում վերջահանգ և ունեցող մի քանի՛ բառեր (կուռ-կըռան), որոնց մեծ մասը, սակայն, ենթարկվում են առաջին հոլովման (տես § 156): Ան հոլովման ենթարկվող միավանկ բառերի հոգնակին անպայման լինում է նէր, որի ն-ն կամ արմատական է (տուն-տընէր), ձուն(ձյուն)-ձընէր, կամ գրաբարյան հիմքի ն-ն (կուռ-կըռնէր), որը պահպանվում է նաև եղակի բացառ. և գործ. հոլովմերում:

Վեցերորդ հոլովման բառերը թեքական հոլովակում ունեն հետեւյալ վերջավորությունները՝ սեռ. և տր. ան. բաց. և գործ. էն, օվ՝ առանց ան հոլովիչիւ Հոգնակին կազմվում է կանոնավոր, բառահիմքին ավելանալով համապատասխան հոլովական վերջավորությունները. օրինակ՝

| Եղակի | Հոգնակի |
|---------------|----------|
| Ուղղ. ձուն(ը) | գուռ(ը) |
| Սեռ. ձան(ը) | գըստն(ը) |
| Տր. ձան(ը) | գըստն(ը) |
| Հայց. ձուն(ը) | գուռ(ը) |
| Բաց. ձընէն | գըսնէն |
| Գործ. ձընօվ | գըսնօվ |

168. Այս հոլովմանն են ենթարկվում նաև էրիգ, կընիգ, ախչիգ գոյականները և Ղարս, էջմիածին հատուկ անունները, որոնցից առաջինը հոլովվում է կանոնավոր, իսկ մյուսները ունեն այն առանձնահատկությունը, որ եզակի սեռ. և տր. հոլովներում ան-ի փոխարեն ունեն ա (կընգա, ախչըգա, Ղարսա, էջմիածնա). Հոգնակի թվում վերջին երկուսը հասկանալի պատճառով չեն գործածվում, իսկ մյուս երկուսը հոլովվում են կանոնավոր. Անդամենա է նշել, սակայն, որ կընիգ գոյականը ստանում է նաև դիր հոգնակին և հոլովվում գրաբարախառն ձեռով՝ ուղղ. կընգգիք, սեռ. կընգգօց, տր. կընգգօց, հայց. կընգգօց, բաց. կընգգօցէն, գործ. կընգգօցօվ (կամ կընգգիքօվ):

169. Բոլոր ութին-ուրին ածանցով բարդված վերացական գոյականները նույնպես ենթարկվում են այս հոլովմանը, և որովհետեւ այդպիսի գոյականները գործածվում են իրի առումով, այդ պատճառով նրանց հայցականը միշտ նման է լինում ուղղականին. օրինակ՝

| Եզակի | Հոգնակի |
|-------------------|------------------|
| Ուղղ. գիշութէն(ը) | գիշութէննէր(ը) |
| Սեռ. գիշութան(ը) | գիշութէննէրու(ն) |
| Տր. գիշութան(ը) | գիշութէննէրու(ն) |
| Հայց. գիշութէն(ը) | գիշութէննէր(ը) |
| Բաց. գիշութէնէն | գիշութէննէրէն |
| Գործ. գիշութէնօվ | գիշութէննէրօվ |

170. Եիրիգուն և ցօրէզ բառերը իբրև ժամանակի անուններ թեև ենթարկվում են վա հոլովման, բայց կարող են հոլովվել նաև այս հոլովմամբ՝ յիշիգուն, յիրիգութան, ցօրէզ-ցօրէգութան:

ՅՈԹԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

171. Այս հոլովման ենթարկվում են այն գոյականները կամ գոյականաբար գործածված բառերը, որոնք հոգնակի սեռականում ստանում են ց հոլովիչը: Դրանք հոգնակի ուղղականում անպայման ունեն ք: Յոթերորդ հոլովումը հանգես է գայիս միայն հոգնակի թվում և բաժանվում է երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են այն գոյականները, որոնք ուղղականում ունեն էք, իք, վըդիք, դիք վերջավորությունները, ինչպես՝ գինիք+գինօց, կընգդիք-կընգդօց, արզեք+արզօց և այլն: Մյուս հոլովումների մասին խոսելիս զուգընթացաբար խոսել ենք այս խմբի մասին (տես §§ 157, 159, 160, 163, 164, 168): Երկրորդ խմբին պատկանում են այն գոյականները, որոնք վերջավորվում են անք, օնք, էնք հոգնակի, մասսմբ և հավաքական իմաստ պարունակող, մասնիկներով: Այս խմբի հոլովումը կատարվում է հետեւյալ կերպ՝ ուղղականի ք-ն սեռականում փոխարինվում է ց-ով և պահպանվում մյուս հոլովմերում: օրինակ՝

| | | |
|----------------|----------|-------------|
| Ուղղ. Պարօնք | Քէռանք | Մարդոյէնք |
| Սեռ. Պարօնց | Քէռանց | Մարդոյէնց |
| Տր. Պարօնց | Քէռանց | Մարդոյէնց |
| Հայց. Պարօնց | Քէռանց | Մարդոյէնց |
| Բաց. Պարօնցէն | Քէռանցէն | Մարդոյէնցէն |
| Փորձ. Պարօնցօվ | Քէռանցօվ | Մարդոյէնցօվ |

172. Դ-րդ հոլովման երկրորդ խմբի նման են հոլովվում նաև ցուցական և իբրև ստացական հանգես եկող մի քանի գերանուններ, ինչպես՝ իսօնք-իսօնց, ձէրօնք-ձէրօնց, մէրօնք-մէրօնց:

Ա մ փ ո ւ մ

173. Ինչպես երեսում է գոյականների հոլովման ընդհանուր պատկերից, կարնո բարբառը ունի ինքնուրույն, կանոնավոր և կուռ հոլովման սիստեմ: Բոլոր գոյականները և գոյականաբար գործածվող բառերը, այդ թվում նաև փոխարյալ բառերը, հո-

լովզում են հիշատակված յոթը հոլովումներից որևէ մեկով։ Հոլովումներից ամենից տարածվածը և գործածականը առաջին հոլովումն է, մյուս հոլովումներին պատկանող շատ բառեր հաճախ ենթարկվում են այդ հոլովման, Կարնո, Ախալցիխեթի, Ախալքալքիի խոսվածքներում սեռական հոլովը ստանում է և հոգը (Պօղոսին հարսը, սեղանին վրա) կենինականի խոսվածքում սեռականը այժմ հոդ չի ստանում, որը պետք է բացատրել ում ճյուղի բարբառների և գըական լեզվի ազդեցությամբ։ Բարբառս չունի այլաձև կամ արտուղի հոլովումներ, եթե նկատի չունենանք ք-ով վերջացող բառերը, որոնք ենթարկվում են գրաբարախառն հոլովման, և մի քանի գարձվածքներում ու ասույթներում գործածվող գրաբարյան հոլովաձևները (խրմօղաց, հիշօղաց, մօրուց, լրսօղաց, առաջուց, հիմիգուց), որոնք մասնակի բնույթ են կրում։

174. Հնչյունաբանության բաժնում նկատեցինք, որ շեշտափուխության հետեւանքով բարբառիս նախաշեշտ ձայնավորները հնչյունափոխվում են ը-ի կամ սղվում։ Հնչյունական այդ փոփոխությունները տեղի են ունենում նաև հոլովման ժամանակ։ Շեշտի տեղափոխության պատճառով հոլովման ժամանակ ևս ձայնավորները կամ սղվում են կամ հնչյունափոխվում, օր պառավ-պառվի-պառվըներ, քուր-քըրօջ, գըլօխ-գըլիսի և այլն։

Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում ա, է ձայնավորներով կազմված միավանկ բառերը (ծառ, փէդ, քար, ձէն, քան) և ի-ով վերջավորվող միավանկ բառերը (ծի, դի)։

2. Ա Ծ Ա Կ Ա Ն

175. Կարնո բարբառում ածականը որպես որոշիչ, ինչպես և ամեն մի որոշիչ, առաջադարս է լինում։ Գոյականի հետ գործածվելիս ածականը մնում է անփոփոխ հոլովով, թվակ չի համաձայնում գոյականին։ Հոդ ստանում է միայն գոյականը, օր հաստ փէդը, հաստ փէդէրը։ Ածականն իրեն փոխանուն՝ գոյականաբար գործածվելիս, կիրառվում է որոշյալ առուժով և ենթարկվում գոյականների առաջին հոլովման։ Հարաբերական ածականները չունեն համեմատական աստիճաններ։

ա) ԱԺԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԾԱՑԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

176. Որակական ածականների համեմատական աստիճանը կարնո բարբառում կազմվում է մի քանի կերպ՝ ա) գրական

ասաիճանը գործ է ածվում բացառական խնդրով. օր. Էս (կամ իսի), տունը էն (ինի) տընէն մէնձ է, թ) գրական աստիճանի վրա պվէլի, էլ, ալ և սրանց համազոր թուրքական տրհա, ջիլիզ մակրայների ավելացման միջացով. օր. Իսի տունը ավելի (տրհա, ջիլիզ, էլ, ալ) մէնձ է, գ) նաև քանց, քանց թէ շաղկապներով այս գեպքում համեմատվող առարկան վրվում է ուղղական հույսով (Էս տունը մէնձ է, քանց մէզալը): Բացառական իմաստով համեմատական աստիճան կազմելու համար, բացի չ ժըմատական ածանցից, օգտագործվում է նաև թուրքերենից փոխառյալ րէքար (ավելի վատ) ածականը:

177. Գերագրական աստիճանը կազմվում է գրականի վրա ավելացնելով յամմէնէն կամ յամմէքէն բառը (որը այլ բան չէ, բայց եթե յամմէն-ամեն գերանվան բացառական հոլովը):

Մի խորմը ածականների, հատկապես գույն ցույց տվող, գերագրական աստիճանը կազմվում է ածականի արմատի հրնչյունափոխած կրկնությամբ, որն ավելի է սաստիկացնում ածականի որակը. օր. կաս-կարմիր, չըփ-չըրլազ, չիփ-շիդագ, ճէփ-ճէրմագ, գէփ-գէզին, սէփ-սէզ:

Երբ գերագրական աստիճանը ցույց է տալիս այնպիսի սրակ, որ իր գերազանցությամբ չի համեմատվում մեկ ուրիշի հետ (բացարձակ գերագրական), ապա ածականի վրա վրվում է շատ մակրայր. օր. շատ գէշն է:

Նախորյուն 1.—Գերագրական է կազմվում նաև ածականի առաջին վանկին մի ուժեղ և երկար շեշտ դնելով, ինչպես՝ յէրգոն=շատ երկար, կարմիր=շատ կարմիր:

3. ԹՎԱԿԱՆ

178. Քանակական թվականներն են՝ մէզ, էրգու, յիրէք չօրս, չինդ, վէց, օխտ, ութ, ինը, տաս, քըսան, յէռսուն (բարդացման ժամանակ գործ է ածվում միայն յէ՛ռ արմատը. օր. յէռմէզ), քառսուն (բարդացման ժամանակ՝ քառմէզ և այլն), յիցուն, վացցուն, օխտանասուն, ութանասուն, ինբուն, նաև ըննասուն, հարուր, հազար, տասը հազար:

179. Մինչզեռ գրաբարում առափ սկսած մինչեւ տասնյոթ քանակական թվականները կազմվում են թեքական սիստեմով, բնդ որում միավորը գրվում է սկզբում, իսկ տասնավորը՝ երկրորդ տեղը և սեռական հոլովով, կարնո բարբառում, արդի հայե-

բենի նման, տասից սկսած բոլոր բաղադրյալ թվականները կազմովում են կցական սիստեմով:

180. Տասնավորից և միավորից կազմված բարդ թվերում տասնավորը դրվում է նախագահաս, իսկ միավորը անփոփոխ կըցվում է նրան։ Այդպիսի բարդությունների մեջ տաս թվականը ունենում է ն հանգը և հավելյալ ը հսդը (որն այս դեպքում կատարում է հոգակապի պաշտոն), եթե հաջորդող միավորը—երկրորդ բաղադրիչը—սկսվում է բաղաձայնով, իսկ եթե միավորը սկսվում է ձայնավորով, ապա տասնավորի վերջում ը չի լինում. ըստ այսօ ստանում ենք՝ տասնըմէգ, տասնէրգու, տասն(ը)յիրէք, տասնըչօրս (նաև տասչօրս), տասնըհինգ, տասնըվէց, տասնօխտ, տասնութ, տասնինը։

181. Հարյուրավորները կազմվում են միավորների և հարիւր-հարուր բառի կցական բարդությամբ. օր. էրգունարուր, շօրսհարուր, վէցհարուր. Հարուր-ը և հազար-ը միավորի և տասնավորի հետ միանում են առանց հոգակապի։

Տանօրուրյուն 1.—Բաղադրյալ թվականներում՝ բարդացման հետեւանքով թեև շեշտը տեղափոխվում է երկրորդ բաղադրիչի վրա, սակայն շեշտի տեղափոխությունը այս դեպքում պատճառ չի գունում՝ առաջին բաղադրիչի որևէ հնչյունի անկայտություն։

182. Քանակական թվականները գոյականաբար դորժածվելիս միշտ ստանում են որոշյալ հոգ, հոգնակի գործածվելիս կանոնավոր կարգով ստանում են էր կամ նէր մասնիկները և ենթարկվում առաջին հոլովման. օրինակ՝

| | |
|----------------------|--------------------|
| Ուզգ. չօրսը | չօրսէրը |
| Մեռ. չօրսի | չօրսէրու(ն) |
| Տր. չօրսի(ն) | չօրսէրու(ն) |
| Հայց. չօրսը (չօրսին) | չօրսէրը, չօրսէրուն |
| Բաց. չօրսէն | չօրսէրէն |
| Գործ. չօրսօվ | չօրսէրօվ |

Տանօրուրյուն 1.—Էրգու թվականը հոլովվելիս և որոշյալ հոգ ստանալիս ունենում է նաև հավելյալ և բաղաձայնը, որը պահպանվում է նաև տասնավորի հետ բարդացման ժամանակ (տասնէրգուսի, տասնէրգուսէն) և չտիվականի կազմության մեջ (էրգըսնօց)։

183. Դասական թվականները, արդի հայերէնի նման, կազ-

մըզում են քանակական թվականներին ավելացնելով թօրք (երկուսից մինչեւ չորսը ներառյալ) և էքորք (հինգ և հնգից բարձր) ածանցները:

Սանորուրյուն 1.—Մէկի, քանակականի գասականը կլինի յառջի:

2. Մի քանի քանակական թվականներից կազմված գասական թվականներն իրենց գասական կերտող ածանցը ստանում են միայն վերջին թվականի համար:

184. Բաշխական թվականները կազմվում են քանակականների կրկնությամբ կամ ազան մասնիկի ավելացմամբ. ինչպես՝ մէդ-մէգ, էրգու-էրգու, չօրու-չօրս, վէց-վէց կամ մէզագան, էրգուազան, չօրսագան, վէցազան:

185. Չափականները կազմվում են քանակականներին ավելացնելով նոց մասնիկը, ինչպես՝ մէզնօց, էրգմանօց, վէցնօց, օխտնօց, տասնօց:

186. Բազմապատկական (մակրայական) թվականները կազմվում են տագ բառմասնիկով, ինչպես՝ էրգու տագ, չօրս տագ, չինգ տագ:

Սանորուրյուն 1.—Դասական և չափական թվականները հոլովվում են առաջին հոլովմամբ: Բաշխական և բազմապատկական թվականները գործ են ածվում իրեն մակրայական տակ և համապատակ և չեն հոլովվում:

4. Գ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

187. Անձնական գերանուններն են՝ յէս, գուն, ան, անիկ (Ալից.), էն, ինքը, մէնք, դուք, անօնք, էնօնք, յիրանք, որոնք հոլովվում են հետեւյալ կերպ:

Ե Կ Ա Կ Ի

| | | |
|----------------------|--------|---------|
| Աւզզ. յէս | գուն | ինքը |
| Սեռ. իմ' | քու | յիրան |
| Տր. ինձի (ընձի) | քէզի | յիրան |
| Հայց. ինձի (ինձի) | քէզի | յիրան |
| Բաց. ինձէն (ընձէն) | քէզնէն | յիրանէն |
| Գործ. ինձնօվ (ընձօվ) | քէզնօվ | յիրանօվ |

Հ Ա Գ Ի Ա Կ Ի

| | | |
|------------|------|--------|
| Աւզզ. մէնք | դուք | յիրանք |
| Սեռ. մէր | ձէր | յիրանց |

| | | |
|---------------------|---------------|-----------------|
| <i>Տր.</i> մէզի | <i>ձէզի</i> | <i>յիրանց</i> |
| <i>Հայց.</i> մէզի | <i>ձէզի</i> | <i>յիրանց</i> |
| <i>Բաց.</i> մէզնէն | <i>ձէզնէն</i> | <i>յիրանցէն</i> |
| <i>Գործ.</i> մէզնօվ | <i>ձէզնօվ</i> | <i>յիրանցօվ</i> |

Ե գ ա կ ի

| | | | |
|---------------------|---------------|---------------|----------------|
| <i>Ուղղ.</i> ան | <i>էն</i> | <i>անօնք</i> | <i>էնօնք</i> |
| <i>Սեռ.</i> անօր | <i>էնօր</i> | <i>ինօր</i> | <i>էնօնց</i> |
| <i>Տր.</i> անօր | <i>էնօր</i> | <i>ինօր</i> | <i>էնօնց</i> |
| <i>Հայց.</i> անօր | <i>էնօր</i> | <i>ինօր</i> | <i>էնօնց</i> |
| <i>Բաց.</i> անօրէն | <i>էնօրէն</i> | <i>ինօրէն</i> | <i>էնօնցէն</i> |
| <i>Գործ.</i> անօրօվ | <i>էնօրօվ</i> | <i>ինօրօվ</i> | <i>էնօնցօվ</i> |

188. Անձնական գերանվան ան, ին Յ-րդ գեմքը գործ է ածվում իբրև ցուցական գերանուն: Ցուցական գերանուններն են՝ աս, ադ, ան (*Ալից.*), էս, էդ, էն (*Ան.*), իսի, իդի, ինի, իսիկ, իդիկ, ինիկ, էսիկ, էդիկ, էնիկ, Ցուցական գերանունները գոյականի հետ իբրև որոշիչ գործածվելիս, ածականների նման, չեն հոլովվում: Իբրև գերանուն գործածվելիս աս, ադ, էս, էդ ցուցականները հոլովվում են այնպես, ինչպես ան, էն, անձնական գերանունները: Իսիկ, իդիկ, ինիկ, էսիկ, էդիկ, էնիկ ձերք չեն հոլովվում, մնացած երեքը հոլովվում են հետեւյալ կերպ:

Ե գ ա կ ի

| | | |
|-------------------------------------|---------------|---------------|
| <i>Ուղղ.</i> իսի | <i>իդի</i> | <i>ինի</i> |
| <i>Սեռ.</i> իսօր | <i>իդօր</i> | <i>ինօր</i> |
| <i>Տր.</i> իսօր | <i>իդօր</i> | <i>ինօր</i> |
| <i>Հայց.</i> ուղղ. կամ տրականի նման | | |
| <i>Բաց.</i> իսօրէն | <i>իդօրէն</i> | <i>ինօրէն</i> |
| <i>Գործ.</i> իսօրօվ | <i>իդօրօվ</i> | <i>ինօրօվ</i> |

Հ ո գ ն ա կ ի

| | | |
|-------------------------------------|----------------|----------------|
| <i>Ուղղ.</i> իսօնք | <i>իդօնք</i> | <i>ինօնք</i> |
| <i>Սեռ.</i> իսօնց | <i>իդօնց</i> | <i>ինօնց</i> |
| <i>Տր.</i> իսօնց | <i>իդօնց</i> | <i>ինօնց</i> |
| <i>Հայց.</i> ուղղ. կամ տրականի նման | | |
| <i>Բաց.</i> իսօնցէն | <i>իդօնցէն</i> | <i>ինօնցէն</i> |
| <i>Գործ.</i> իսօնցօվ | <i>իդօնցօվ</i> | <i>ինօնցօվ</i> |

189. Իրրեւ ստացականներ գործ են ածվում անձնուկան դերանունների սեռականները՝ իմ, քու, անօր, ինօր, էնօր, յիրան, մէր, ձ'էր, անօնց, ինօնց, էնօնց, յիրանց, սրոնք գոյականի հետ գործածվելիս գրվում են գոյականից առաջ և հանդիսանում են հատկացուցիչներ, ընդ որում եզակիների կիրառման գեպքում գոյականը ստանում է ս, դ, թ ստացական հոգերը, ինչպես՝ իմ տունըս, քու տունրդ, անօր, ինօր, էնօր, յիրան տունը. հոգնակիների կիրառման գեպքում գոյականը բոլոր գեմքերում ստանում է թ ստացական հոգը, ինչպես՝ մէր տունը, ձ'էր տունը, անօնց, ինօնց, յիրանց տունը:

190. Իրրեւ ստացական կիրառվող այս գերանունները գոյականաբար գործածվելիս հոլովվում են, ընդ որում առաջին, երկրորդ գեմքերի գերանունները եզակի թվում ստանում են ս, դ գիմորոշ հոգերը և ունեն հոլովման կրկնակի ձև. Երկրորդ գեմքի գերանուննը բացի այդ թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում ստանում է զ հավելյալ բաղաձայնը:

Ե Գ Ա Կ Ի

| | |
|--------------------------------|---------------------|
| Ուզգ. իմըս | քուգըդ |
| Մեռ. իմիս նաև իմինիս | քուգիդ նաև քուգինիդ |
| Տը. իմիս | իմինիս |
| Հայց. իմըս, իմիս, իմինիս, իմըս | քուգըդ, քուգիդ |
| Բաց. իմէս | իմինէս |
| Գործ. իմօվս | իմինօվս |

Հ Ա Գ Ա Կ Ի

| | |
|------------------------|----------------------|
| Ուզգ. իմօնքըս | քուգօնքըդ |
| Մեռ. իմօնցըս | քուգօնցըդ |
| Տը. » | » |
| Հայց. իմօնքըս, իմօնցըս | քուգօնքըդ, քուգօնցըդ |
| Բաց. իմօնցէս | քուգօնցէդ |
| Գործ. իմօնցօվս | քուգօնցօվդ |

Առաջին, երկրորդ գեմքերի անձնական գերանունների հոգնակի սեռականները իրրեւ ստացականներ գործածելիս եզակի թվում գարձյալ ունեն հոլովման կրկնակի ձև, բայց հոլովվելիս գիմորոշ հոգ չեն ստանում:

Ե գ ա կ ի

| | |
|------------------------------------|-----------------------------------|
| <i>Ուղղ. մէր</i> | <i>ձ'էր</i> |
| <i>Սեռ. մէրի նաև մէրինի</i> | <i>ձ'էրի նաև ձ'էրինի</i> |
| <i>»</i> | <i>»</i> |
| <i>Հայց. մէր, մէրի մէր, մէրինի</i> | <i>ձ'էր, ձ'էրի, ձ'էր, ձ'էրինի</i> |
| <i>Բաց. մէրէն</i> | <i>ձ'էրէն</i> |
| <i>Գործ. մէրօվ</i> | <i>ձ'էրօվ</i> |
| <i>մէրինօվ</i> | <i>ձ'էրինօվ</i> |

Հ Ա Գ Ա Կ Ի

| | |
|-----------------------------|-------------------------|
| <i>Ուղղ. մէրօնք</i> | <i>ձ'էրօնք</i> |
| <i>Սեռ. մէրօնց</i> | <i>ձ'էրօնց</i> |
| <i>»</i> | <i>»</i> |
| <i>Հայց. մէրօնք, մէրօնց</i> | <i>ձ'էրօնք, ձ'էրօնց</i> |
| <i>Բաց. մէրօնցէն</i> | <i>ձ'էրօնցէն</i> |
| <i>Գործ. մէրօնցօվ</i> | <i>ձ'էրօնցօվ</i> |

Մանրուբյուն 1. — Անձնական գերանվան երրորդ դեմքի թե՛ եղակի թե՛ հոգնակի սեռականները իրեւ ստացական շատ սակավ են գործածվում, այնուամենայնիվ կիրառվում են և հոլովվում են ինչպես առաջին, երկրորդ դեմքի ստացականները:

Մանրուբյուն 2. Մէր, ձէր ստացականների փոխարեն կարող են գործածվել ստացական հոգ ստացած գոյականները՝ հոգնակի թվով, օրինակ՝ տընէրը-մէր տները, տընէրդդ-ձէր աները:

191. Փոխագարձ գերանուններն են՝ մէզ մէզու, յիրար(ու):

| | |
|---------------------------|------------------|
| <i>Սեռ. մէզ մէզու</i> | <i>յիրար(ու)</i> |
| <i>Տր. մէզ մէզու(ն)</i> | <i>յիրար(ու)</i> |
| <i>Հայց. մէզ մէզու(ն)</i> | <i>յիրար(ու)</i> |
| <i>Բաց. մէզ մէզէն</i> | <i>յիրարէն</i> |
| <i>Գործ. մէզ մէզօվ</i> | <i>յիրարօվ</i> |

192. Հարաբերական գերանուններն են վօվ նաև վէվ(ով), վօրը(որը) ինչ, վօրնօր(որը որ), վէվ օր (ով որ), վերջին երկուսը չեն հոլովվում, երբորդը հոլովվում է գոյականների առաջին հորդման նման (միայն եղակի սեռականից սկսած նախաձայն իւն հնչյունափոխվում է թ-ի). առաջինը, որ հոգնակի թվում ունի միայն բացառական հոլովածն՝ յումինցէն և երկրորդը՝ հորդվում են այսպես.

| <i>b q a k b.</i> | <i>z o q n a k b</i> |
|-------------------|----------------------|
| Աւզ. վօկ | վօրբ |
| Մեռ. յում | վօրի |
| Տր. յում | վօրի |
| Հայց. յում | վօրբ, վօրի |
| Բաց. յումէն | վօրէն |
| Գործ. յումօվ | վօրօվ |

193. Հարցական գերանուններն են՝ վօկ, վօրբ, ի՞նչըդ (ի՞նչպիս), յուր (յուր), ի՞նչքան (ո՞րքան), յուրդէղ (որտեղ), քանիս: Վերջին երկուսը, ընդ որում առաջինը միայն եզակի թվով, հոլովվում են հետեւյալ կերպ՝

| <i>b q a k b</i> | <i>z o q n a k b</i> |
|------------------|----------------------|
| Աւզ. յուրդէղ | քանիսնիս |
| Մեռ. յուրդէղի(ն) | քանիսնիսի |
| Տր. » | » |
| Հայց. յուրդէղ | քանիսն, քանիսի |
| Բաց. յուրդէղն | քանիսնէն |
| Գործ. յուրդէղօվ | քանիսնօվ |

Առաջին երեքի հոլովման մասին տես § 192: Ի՞նչըդ, յուր, հարցականները չեն հոլովվում: Ինչքանը հոլովվում է քանիսի նման:

Մանրուրյուն 1.—Կարնո բարբառը հայտնաբար ում ճյուղի բարբառներից փոխ առնելով բացառականի ից վերջավորությունը, կազմել է յուրդէղ (որտեղ) հարցականի բացառականի յուրդից հոլովաձեր:

194. Որոշյալ գերանուններն են՝ յամմէն (ամեն), յամմէնքը (ամենը), քօլօր, յամմէն մէզը (յուրաքանչյուրը):

| | | |
|----------------------------------|-----------|----------------|
| Աւզ. յամմէն | քօլօր | յամմէն մէզը |
| Մեռ. յամմէնի(ն) | քօլօրի(ն) | յամմէն մէզի(ն) |
| Տր. » | » | » |
| Հայց. ուզգականի կամ արականի նման | | |
| Բաց. յամմէնէն | քօլօրէն | յամմէն մէզէն |
| Գործ. յամմէնօվ | քօլօրօվ | յամմէն մէզօվ |

Մանրուրյուն 1.—յամմէնքը հոլովվում է յամմէնի նման:

195. Անորոշ գերանուններն են՝ մէզը, մէզն ու մէզը, մէ-

քանիմ կամ քանիմ (մի քանի), զօր մէկը, յուրիշ (ուրիշ) մէ-
գալը (Ախց.), մէկէլը (մյուսը).

Ե Կ Ա Կ Ի

| | | |
|----------------------------------|------------|-----------|
| Ուղղ. մէկը | յուրիշ | մէկալը |
| Սեռ. մէկի(ն) | յուրիշի(ն) | մէկալի(ն) |
| Տր. | » | » |
| Հայց. ուղղականի կամ տրականի նման | | |
| Բաց. մէկէն | յուրիշէն | մէկալէն |
| Գործ. մէկօվ | յուրիշօվ | մէկալօվ |

Հ Ա Գ Ն Ա Կ Ի

| | |
|----------------------------------|---------------|
| Ուղղ. յուրիշնէրը | մէկալնէրը |
| Սեռ. յուրիշնէրու(ն) | մէկալնէրու(ն) |
| Տր. | » |
| Հայց. ուղղականի կամ տրականի նման | |
| Բաց. յուրիշնէրէն | մէկալնէրէն |
| Գործ. յուրիշնէրօվ | մէկալնէրօվ |

Խանոթուրյուն 1.—Հասկանալի պատճառով մէզը հոգնակի թվով
չի գործածվում: Մեզն ու մէզը, վօր մէզը, հոլովվում են
ինչպես մէզը: Մէզէլը հոլովվում է ինչպես մէզալը, իսկ
քանիմ դերանունը չի հոլովվում:

196. Ժխտական գերանուններն են՝ հէջ մէկը (ոչ մեկը),
հէջ մէ (ոչ մի), հէջ քան (ոչինչ), հէջ մարթ (ոչ ոք): Առաջինը
հոլովվում է ինչպես մէզը (տե՛ս § 195), երկրորդը չի հոլովվում,
երրորդը ենթարկվում է գոյականների առաջին հոլովմանը, իսկ
չորրորդը՝ երկրորդ հոլովմանը, բայց բացառական և գործիական
հոլովմանը չի գործածվում:

5. Հ Ա Գ

197. Արոշյալ հոգերն են՝ թ: Բաղաձայնով վերջացող բա-
ռերն սատանում են թ, օր. շունթ, տունթ, քունթ, իսկ ձայնավորով
վերջացող բառերը՝ ն, օր. կագուն, ձ'ին, գինին: Սեսական հոլովը
այժմ հոգ է ստանում Ախալցիխեի և Ախալքալաքիի խոսվածք-
ներում: Բացառական և գործիական հոլովները որոշյալ հոգ չեն
ստանում: Աչ եզակիում, ոչ հոգնակիում:

Երբ հաջորդ բառը սկսվում է ձայնավորով, նախորդ բառի

ը հոգը չի կառնում ն, մի բան, որ կատարվում է արդի գրական հայերենում՝ պարզապես բարեհնչյունության համար, այլ մում է գարձյալ ը, ինչպես՝ զիբը էնօր տըլի, բացի այն գեղքից, երբ ը հոգը ստացած բառին հաջորդում են էլ, ալ բառերը՝ նույնպես, նաև, և իմաստով և էական բայց. ինչպես՝ մարքն էլ, ալ գուրա. Խսիկ էլ Ալմաստի մարքն է: Ախալքալաքի խոսվածքում՝ իսիկ ա (Ա) Ալմաստի մարքն է, Խսկ էթե էլ, ալ բառերը գործ են ածվում այլևս իմաստով՝ ը-ն մում է անփոփոխ, ինչպես՝ մարքը էլ, ալ չի գա:

Բարբառումս որոշյալ հոգ են ստանում նաև հատուկ գոյրականները, տեղանունները (Գիրօրը, Անին, Աղինը) և գրեթե բոլոր խոսքի մասերը, երբ գործ են ածվում գոյականաբար, ինչպես՝ յառջինը, յերգանը, տագինը, վրայինը. Գոյականները հոգնակի թվում մեծ մասամբ գործ են ածվում որոշյալ առումով.

198. Անորոշ հոգ է գործածվում, երբ խոսողը կամենում է գոյականի ընդհանուր բովանդակությունը կոնկրետացնել այդ տեսակի առարկաներից մեկի, մասնակիի մեջ՝ տանց տարբերակելու, որոշելու այդ մեկը նույն տեսակի մյուս առարկաներից. օրինակ՝ փեղը տու—մի փայտ տուր: Այսուեղ ըմ հոգը փայտ գոյականի ընդհանուր բովանդակությունը կոնկրետացնում է մասնավորի, մեկի մեջ, բայց չի որոշում, թե որ փայտը: Անորոշ հոգերն են՝ բաղաձայնով վերջացող բառերի համար՝ ըմ, օրձանջըմ, յէզըմ, տունըմ, իսկ ձայնավորով վերջացող բառերի համար՝ մ, օր. Էրէխէմ, կադում, որոնք այլ բան չեն, բայց եթե մեկ թվականը: Այս բանը այժմ, իհարկե, չի գիտակցվում, որի հետեանքով և շատ հաճախ անորոշ հոգ ունեցող գոյականի հետ գործ է ածվում նաև մէ—մեկ թվականը, ինչպես մէ թուխտըմ, մէ կովըմ, մէ օչխարըմ:

